№ 276 ԿԻՐԱԿԻ, 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 276

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE VENISE S. LAZARE

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տ ե լ ե ֆ օ ն № 2—53

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ

(45-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	Այնուհետեւ ամսական ՄԷԿ ռուբլի։
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 ռուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 13-ին, Քամոյեան եկեղեցում (Արքունական փողոց) տեղի կունենան պատարագ և հոգեհանգիստ Մոսկվայում վախճանված տիկին

ՆԱՏԱԼԻԱ ԻՎԱՆՈՎՆԱ

ՇԱՀ-ՊԱՐՈՆԵԱՆՑԻ

համար։ Պատարագը կը սկսվի ժամը 10½-ին, իսկ հոգեհանգիստը՝ 12-ին։ Հանգուցեալի ամուսինը՝ բժշկապետ Մ. Ս. Շահ-Պարոնեանց և դուստրը՝ բարոնեսսա Մ. Մ. Ունգերն-Շտերնբերգ խնդրում են ազգականներին և բարեկամներին յարգել իրանց ներկայութեամբ հանգուցեալի յիշատակը։ 913. 2—2

ՀԱՒԼԱԲԱՐԻ „Պալաս" ԹԱՏՐՈՆ

(Կոստանտինովսկայա փողոց նախկին Արաքսեանի)

ԱՅԺՄ ՆՈՐՈԳՎԱԾ, ԿԱՐԳԻ ԳՑՎԱԾ ԵՒ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՌԱՑՎԱԾ։

Այսօր, կիրակի, դեկտեմբերի 13-ին Հայ դրամա-օպերէտային առաջին դերասանական ընկերակցութիւնը Ընդառաջ գնալով հասարակութեան ցանկութեանը՝ կը ներկայացնէ ժողովրդին սիրելի դարձած

ԱՍԻԱԿԱՆ ՈՒՐԱԽ ՕՊԵՐԷՏ

ՆԱ ՉԸ ԼԻՆԻ ՍԱ ԼԻՆԻ

(O օլմասուն—բու օլսուն)

Թարգմ. Ս. Կարապետեանի։
Արեւելեան նուագախումբ Թարգմանչի ղեկավարութեամբ։
Սկիզբն է երեկ. ժամը 8½-ին։
Տեղերի գները 1 ր. 50 կ. մինչև 30 կոպէկ։
Թատրոնը տաքացվում է և կը տիրէ կարգապահութիւն։
Խմբի լիազօրներ՝ պ. պ. Թորոսեան, Ղազարեան և Փիրումեան։
914. 1—1

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. ստամոքսի, աղիքների, լեարդի, ԹՈՔԱՒՈՐԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—92.
տп. (ա. օ.) 896. 100—7

ԿՈՉ

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ", ստանալով Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի օրհնութիւնը և հաճութիւնը ու պաշտօնական իշխանութեան թոյլտուութիւնը, իրան նպատակ դրած լինելով ըստ առաջին հերթի նպաստել Վասպուրական նահանգի վերաշինութեան գործին և հայ կամաւորական միլիցիայի պահպանութեան, որ պէտք է պաշտպանէ տեղական ժողովուրդը աւարառութիւններից և աւազակութիւններից—սրանով կոչ է անում հայ գիտակից և հայրենասէր հասարակութեանը՝ աջակցել իրան՝ գլուխ բերելու այդ կարեւոր և շինարար գործը։

Թող այս անգամ էլ, ինչպէս և միշտ, հայ ունեւորի ռուբլիներին միանան և շատաման հայ ժողովրդի լումաները և թող այս շինարար գործը նկատվելով ժողովրդական՝ հայ ժողովրդի ամեն մի անհատ չը խնայէ իր փոքրիկ լուման ձգելու ազգային այդ շինարար գանձանակի մէջ։

Դրամական նուէրները կարելի է ուղարկել կամ ուղղակի Յանձնաժողովի նախագահ Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեանի հասցէով՝

(Тифлисъ, ул. Петра-Великаго, собст. домъ, Давиду Богдановичу Аван-Юзбашеву Хану Сакнакскому), կամ գանձապահ Ալ. Մելիք-Ազարեանցի (Тифлисъ, Лермонтовская ул. соб. домъ) և կամ «Մշակի» միջոցով։

Նախագահ Յանձնաժողովի՝ Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեան
Փոխ-նախագահներ՝ Հ. Առաքելեան, բժշկ. Բ. Նաւասարդեան
Անդամ-գանձապահ՝ Ալ. Մելիք-Ազարեան
Անդամներ՝ Միք. Արամեան, Յ. Պարեան, Միք. Աթարբէկեան, Խաչ. Խաչատրեան, Ստեփան Սուլխանեան, Աւետիք Նզեկեան, Ստ. Մալխասեան (քարտուղար), Մ. Մինասեան։
(օ. մ.) տп. 915. 10—1

Կովկ. Հայոց Բարեգ. Ընկ. ձեռնարկութեամբ

ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է

ՆՈՒՐԲ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Չորեքշաբթի, ամսիս 16-ին, առաւօտեան ժամը 10-ին, Ալչվանգի խանութում ցուցադրվելու են Թիւրքիայից փախստական հայ կանանց բանուածքները, որոնք Ամերիկայի և Եւրոպայի շուկաներում շատ գնահատված են և Թիֆլիսում այժմ ուշադրութիւն են գրաւել։ Ասեղնագործողները նոյն տեղում կը պարապեն նշանակված օրերում ժ. 12—4-ը։ Ցանկացողները կարող են ցուցադրված իրերը գնել և ըստ այդ նմուշների նորերն ապսպրել։ Ցուցահանդէսը կը տևի ամսիս 16-ից մինչև 20-ը առաւ. ժ. 10-ից մինչև երեկ. ժամը 7-ը։ Հերթապահ տիկինները կարեւոր բացատրութիւններ կը տան։
տп. (շ.) 920 2—1

ԱԶԴ

Առեւտրական Տուն «Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ եւ Որդիք» Ծխախոտի գործարանը սրանով յայտարարում է, որ գործարանը աշխատում է լիակատար ընթացքով եւ բոլոր տեսակի ապրանքների արտադրումը կատարվում է անընդհատ։ Մանրավաճառ խանութներին մեր ծխախոտային ապրանքը մատակարարում են մեր կառքերը։ Ֆաբրիկային գլխաւոր խանութը գտնվում է Դվորցովայա փողոցի վրա, ուր ընդմիշտ կարելի է ստանալ մեր գործարանի արտադրած բոլոր տեսակի ապրանքներից։

Խորին յարգանքով Ա/Տ. «Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ և Որդիք».

917. 3—1 (Ն.Կ.) տп.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, դեկտեմբերի 14-ին

Հայոց Դրամատիկ Ընկերութիւն

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

կը ներկայացնէ

ԴՕԿՏՕՐ ՇՏՕԿՄԱՆ

Դրամա 5 արար. Իբսէնի, Թարգմ. Ս. Հախումեանի։

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ԱՄԲՈՂՋ ԽՈՒՄԲԸ

Սկիզբը ժամը ճիշդ 8-ին։ ◆—◆ Տեղերի գները սովորական են։
Տոմսակները ծախվում են միմիայն թատրոնի կասսայում։
Կասսան բաց է ամեն օր ժամը 10-ից մինչև 2-ը, երեկոյեան 6-ից 8-ը։
Ռեժիսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Ա. ԵԶԵԿԵԱՆ և Ա. ՆԱԶԱՐԵԹԵԱՆ
Պատրաստվում է ներկայացման համար «ՊՕՏԱՇ ԵՒ ՊԵՐԼԱՄՈՒՏՐ»

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

ԱՒԱԳՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների և կանդիդատների, որ համաձայն ժողովարանի կանոնադր. § 15-ի, 1916 թ. անդամակցութեան տոմսակ ստանալու վերջնական ժամանակամիջոցը լրանում է դեկտեմբերի 14-ին ս. թւի։ Այն անդամներն ու կանդիդատները, որոնք չեն վերանորոգի իրանց տոմսակները մինչև դեկտեմբերի 15-ը՝ կը համարվեն ժողովարանից կամովին հեռացած, սակայն մի տարվայ ընթացքում կարող են նորից անդամագրվել՝ վճարելով 24 ռուբլի, իսկ անդամների ազատ տեղ չը լինելու դէպքում կը համարվեն այդպիսիները կանդիդատ։ Տոմսակ ստանալու ժամանակ անդամները և կանդիդատները պարտաւոր են հանգցնել իրանց պարտքերը, որոնք արձանագրված կը լինեն ժողովարանի գրքերում, հակառակ դէպքում՝ տոմսակներ չեն տրվի։ Գրասենեակը բաց է ամեն օր՝ երեկոյեան ժամը 8—11։
տп. (6, 13) 852. 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՁԻԹԵՆԻ

ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՅՕԳՈՒՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ

Ժողովածուին մասնակցել են մօտ 50 հայ գրականագէտներ։
Գինն է 2 ռուբլի Թիֆլիսում։ Օտար տեղերի համար ճանապարհածախսով—2 ր. 50 կ.։
Վերադիր վճարով ոչ ոքի չի ուղարկվում։
Պահեստը գտնվում է Նպաստամատոյց Ընկերութեան գրասենեակում, ուր և պէտք է դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Обществу Вспомоществованія на случай бѣдствій «НПАСТАМАТУЙЦЪ». Соломоновская, 21. տп. 892. 10—8

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տելեֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանանց և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող միայն стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Լ. Ա. Ջակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Ի. Ն. Տէր-Ներսէսեան
Լ. Ր. Փիշեր
Մ. Պ. Շահպարոնեանց

Ն. Կ.) տп. 742. 100—18

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. 10—3 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) տп. 515. 100—92

ԲԺԻՇԿ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ Մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7-ը։
Бебутовская ул. № 26. 3 րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
տп. 779. 50 38

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Փօզնէրի։ Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի եւ կաշուի հիւանդութիւններով՝ առաւ. ժամը 10—12, երեկ. ժամը 4—6։ Սօլոլակ, Բարիչինսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակարանի դիմացը, տելեֆօն 10—58.
տп. (Հ. ու. Կ.) 806. 50—16

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր

ԲԺՇԿՈՒՀԻ

ՍՕՖԻԱ ՄԻՐՋՕՅԵԱՆ

ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիէվսկայա փող. № 1. Տելեֆօն № 16—67։
տп. 753. 50—44

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նազարեան

(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանքային ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլոլակ, Բարիչինսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(Ն.Ն.Կ.) տп. 634. 100—39

ԴԷՊՔԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

—

Համադանը ռուսաց զօրքից գրաւվելուց յետոյ, Ղումի գրաւումը դարձեալ ռուսական զօրքի ձեռքով ամենամեծ հարուածը պէտք է հասցնի թիւրք-գերմանական հմայքին, որով վերջերս շլացել էին պարսիկ կառավարութիւնը և պարսիկ յեղափոխականները։

Ղում քաղաքում հաստատվել էր երիտասարդ պարսիկների յեղափոխական ժամանակաւոր կառավարութիւնը, որն, իբր թէ, գործում էր շահի և կառավարութեան դէմ, բայց, իսկապէս, գործում էր կառավարութեան գիտութեամբ, որ այդպիսով կամենում էր չքմեղ ձեւանալ։

Գերմանական դեսպան պրինց Րէյսը և Թաւրիզում գորգի գործարանի նախկին կառավարիչ վաճառական Շեօնէմանը կարողացել էին վերջերս նշանաւոր աջողութիւն ձեռք բերել և ազդել պարսկական կառավարութեան վրա, հաւատացնելով որ ամբողջ մահմեդական աշխարհը ոտքի է կանգնելու, որ ռուսները անզօր են։ Եւ պարսկական նենգաւոր կառավարութիւնը, որ վերջերս ամեն կերպ հաւատացնում էր, թէ իր փրկութիւնը կայանում է Ռուսաստանի և Անգլիայի հետ դաշնակցութեան մէջ, յանկարծ շրջեց ճակատը և յայտարարեց, թէ ստիպված է, ի նկատի ունենալով պարսիկ ժողովրդի տրամադրութիւնը, անցնել Թիւրքիայի և Գերմանիայի կողմը, աջակցել նրանց, իբրև իսլամի պաշտպանների։

Սրանով այդ նենգամիտ կառավարութիւնը կամենում էր հաւատացնել պարսիկ ժողովրդին, որ Անգլիայի և Ռուսաստանի մղած պատերազմը իսլամութեան դէմ է, և դրանով նա կամենում է գրգռել և միւս երկրների իսլամ ժողովուրդները, թէև սրանք փորձով գիտեն, որ ոչ Անգլիան, ոչ Ռուսաստանը, ոչ Ֆրանսիան բնաւ չեն կռւում իսլամութեան դէմ, այլ միայն Գերմանիայի և Թիւրքիայի, և իսլամական կրօնը նրանց կողմից յարգված և պաշտպանված է։

Սակայն որովհետև ամբոխի տրամաբանութեան, մանաւանդ արեւելեան ժողովուրդների տրամաբանութեան վրա ազդում է միշտ արտաքին աջողութիւնը և ույժը, ուստի և պարսիկ յեղափոխականների, որոնց միացել են և շվեդների ձեռքով կառավարվող ժանդարմները, պատահական աջողութիւնը ստեղծել էր աննպաստ տրամադրութիւն ժողովրդի մէջ ընդդէմ ռուսների և անգլիացիների։

Եւ ահա Համադանի առումը, որին յաջորդեց և Ղում քաղաքի գրաւումը, ուր ամրացել էին պարսիկ յեղափոխականները և գերմանո-թիւրքական խռովարարները, վերջապէս ռուսաց զօրքի կողմից Թէհրանի մօտ, Քերէջ գիւղում, Էմիր-Հիշմէթի ղեկավարութեամբ գործող խռովարարների խմբի այս օրերս կրած ջարդը, որի մասին հաղորդեց երէկվայ հեռագիրը, անշուշտ զգաստութիւն պէտք է բերեն և սթափեցնեն թէ պարսիկ կառավարութիւնը և թէ ամբոխը։

Եւ արդէն, երբ ռուսաց զօրքը մօտեցել էր Համադանին, այդտեղի նահանգապետը շտապել էր պատգամաւորներ ուղարկել ռուսաց զօրապետին՝ խնայել քաղաքը և ներել։

Արեւելքում, ինչպէս ասացինք, ազդում են կտրուկ և իրական միջոցները։ Եթէ ռուսական զօրքը, առանց ժամանակ տալու խռովարարներին՝ շարունակէ իր առաջխաղացութիւնը, մի կողմից Համադանից դէպի Քիրմանշահ, միւս կողմից դէպի Թէհրանը, այն ժամանակ պարսիկ նենգաւոր կառավարութիւնը, որ մի ձեռքով թոյլատրում է շվեդացիներին՝ միանալ գերմանացիների հետ, իսկ միւս կողմից հրատարակւում է նրանց ապստամբներ, կոր ի գլուխ ստիպված կը լինի թողնել իր նենգամիտ քաղաքականութիւնը։

Պարսկաստանում անդորրութիւն հաստատելու իրողութիւնից է կախված և հարիւր հազարաւոր քրիստոնեաների՝ հայերի և ասորիների ապահովութիւնը կոտորածից. Յայտնի է, որ գերմանացիները և թիւրքերը ամեն տեղ նկատում էին հայերին և ասորիներին իբրև դաշնակիցներ ռուսների։ Հետևաբար և Ռուսաստանի վրա քաղաքական-բարոյական պարտականութիւն կայ իր կտրուկ, եռանդուն միջոցներով զսպել խռովութիւնները Պարսկաստանում և հաստատել անդորրութիւն։

Ռուսական մայրաքաղաքի թերթերից մինը առաջարկում է ուղղակի ժամանակաւորապէս հաստատել Պարսկաստանում երկու գինուորական ընդհանուր նահանգապետութիւն, մեկուսացնելով նենգամիտ պարսիկ կառավարութիւնը։ Սակայն հարկ չը կայ նոյնիսկ դիմել այդպիսի խիստ միջոցի, որ կարող է առիթ տալ թշնամիներին ասելու, թէ Ռուսաստանը և Անգլիան կամենում են վերջ դնել Պարսկաստանի անկախութեան։ Բաւական է ձեռք առնել պատերազմական կտրուկ միջոցներ՝ Համադանի, Ղումի և Քերէջի դէպքերի նման, և ամեն ինչ կը խաղաղվի։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ ՅՕԳՈՒՏ ՀԱՅԵՐԻ

Լոնդոնի դիւանագիտական շրջաններում տեղեկութիւններ են ստացված Կ. Պոլսի ամերիկական դեսպան Մորգենտաուի գործունէութեան մասին, որը բազմիցս հանդէս է եկել ի պաշտպանութիւն հայ ազգաբնակութեան, որ սիստեմատիքաբար բնաջնջվում է թիւրք կառավարութեան ձեռքով։

Ամերիկական դեսպանի ձեռներէցութեամբ, մեծ վեզիրից պաշտօնական հերքում ստանալուց յետոյ թիւրքահայերի մասսայական սպանութիւնների վերաբերմամբ, Փոքր-Ասիա եկաւ ամերիկական մի յանձնաժողով, կազմված ամերիկական յայտնի հասարակական գործիչներից, ինչպիսիք են Չարլզ Կրանկ, Ս. Դիւտտոն, Օ. Ստրաուզէ և ուրիշներ։

Ամերիկա վերադառնալուց յետոյ, յիշեալ յանձնաժողովը հրատարակել է իր ճանապարհորդութեան տեղեկագիրը, որի մէջ մատնանշում է, որ «թիւրքահայերի վերաբերմամբ ձեռք առնված միջոցները հանդիսանում են հայերի խաղաղ բնաջնջման ծրագրի մեթոդիկ գործադրութիւն»։ Ամերիկեան յանձնաժողովը յայտարարում է, թէ թիւրք ագենտների վրիժառութիւնից խուսափելու համար ինքը հնարաւորութիւն չունի հրատարակելու այն անձերի անունները, որոնք հաստատել են կառավարական գործիչների մասնակցութիւնը հայկական ջարդերին, թէև այդ անձերը պատկանում են դիւանագիտական և հիւպատոսական հաստատութիւնների պաշտօնեաների կարգին և հետևաբար, ըստ երևոյթին, ազատ պիտի լինէին որևէ ոտնձգութիւնից իրանց կեանքի դէմ։ Յանձնաժողովի հաւաքած բոլոր տեղեկութիւնները հաստատում են, որ երիտասարդ հայերը զինուոր են տարված, իսկ ծերունիները դաւադրութեան մեղադրանքով մահապատժի են ենթարկվում։ Կանանց և աղջիկներին տանում են հարեմները կամ ոչնչացնում են։

Ամերիկեան յանձնաժողովը հաստատում է իր ժամանակին չեզոք դիւանագէտների յայտնած այն ենթադրութիւնը, որ հայկական ջարդերը Թիւրքիայում կատարվում են Բեռլինի կառավարութեան լռելայն հաւանութեամբ, մինչդեռ այդ կառավարութիւնը կարող էր իր միջամտութեամբ ազդել Բ. Դրան վրա։

Ամերիկեան պաշտօնական տեղեկագիրը հաստատում է, որ սուտ են Վաշինգտոնի գերմանական դեսպան կոմս Բեռնսդորֆի և թիւրքաց դեսպան Ռուստեմ-բէյի այն յայտարարութիւնները նախագահ Վիլսոնին, թէ «հայերի դէմ եղել են ռեպրեսիաների միայն հատուկէնտ դէպքեր»։ Լոնդոնի դիւանագիտական շրջաններում հաւատացած են, որ այս բանից յետոյ Ամերիկան խիստ միջոցներ ձեռք կառնէ Թիւրքիայի դէմ և ամենից առաջ կը խզէ դիւանագիտական յարաբերութիւնները, որի մասին իր ժամանակին յայտարարել էր Վաշինգտոնում արտաքին գործերի մինիստր Լանսինգը։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐԸ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Associated Press»-ի Պարիզի թղթակիցը հաղորդում է հետևեալ յայտարարութեան մասին, որը արել է ֆրանսիական մինիստր գեներալ Գալլիենին։

«Ես անխախտօրէն հաւատում եմ մեր վերջնական յաղթութեան. մեր թշնամիները անզօր են մեզ գերազանցելու։ Դեռ 1914 թ. սեպտեմբերին, երբ մեզ աջողվեց կանգնեցնել գերմանացիների առաջխաղացումը, նրանց պատերազմի ծրագիրը ոչնչացաւ։ Այդ յաղթութիւնը դաշնակիցներին ժամանակ տուեց կազմակերպել իրանց ոյժերը, որոնք ներկայումս գերազանցում են գերմանացիներից՝ թէ մարդկանց թւի տեսակէտից, թէ դրամի կողմից, մանաւանդ որ մենք տիրապետում ենք նաև ծովի վրա։ Գերմանո-աւստրիացիները ամեն կողմից լինելով սեղմված, յամառ կռւում են, որպէս զի ազատվեն այդ դրութիւնից։ Իզէրի մեր զօրաճակատի յարձակումը, անցեալ գարնան առաջխաղացումը արևելեան ճակատի վրա և կռիւները Բալկաններում,—այդ բոլորը միայն ցնցումներ են գազանի, որին մենք հետամտում ենք։ Ես ի հարկէ խոստովանում եմ գերմանացիների եռանդը և ոյժը, բայց դա երկրորդական նշանակութիւն ունի։ Նոյն իսկ նրանց աջողութիւնները մօտ անցեալում, շնորհիւ Բուլղարիայի դաւաճանութեան, անզօր են փոխել ընդհանուր ռազմագիտական դրութիւնը։ Իրանց զօրաճակատի ետևում ֆրանսիական, անգլիական, ռուսական և իտալական զօրքերը անխախտ կանգնած են օրէ-օր աւելի ուժեղանալով և լաւ կերպով զինուորվելով։ Մինչդեռ թշնամիների ոյժերը, որոնց տեղափոխում են արևելքից արևմուտք և հակառակը՝ գնալով թուլանում են, իսկ գերմանական զինուորի քաջութիւնը արագ ընկճվում է։ [illegible] մէջ համոզված են բոլոր նրանք, ովքեր տեսել են գերմանացի գերիներին՝ գերված սեպտեմբեր ամսին Շամպայնում։ Աւստրո-գերմանացիների համար պատերազմի վերջը կը լինի օրհասական։ Եւ միայն մեր կողմից յամառութիւն չը բանեցնելը կարող է փրկել նրանց։ Եթէ ցանկանում էք իմանալ, թէ արդեօ՞ք մենք ոյժ կունենանք կռիւը մղել մինչև յաղթական վախճանը, այցելեցէք մեր զօրաճակատը. ամենուրեք, զօրաճակատում, Պարիզում, քաղաքներում և գիւղերում դուք բոլոր ֆրանսիացիների հայեացքում կը կարդաք անխախտ վճռականութիւն՝ կռւել մինչև յաղթութիւն տանելը։ Իսկ իմ դերը կայանում է նրանում, որպէս զի միացնել մեր բոլորիս ոյժերը և շահագործել մեր բոլոր կարողութիւնը ներկայ բոպէի համար, որքան կարելի է քիչ զոհեր տալով՝ թէ մարդկանցով և թէ դրամով։ Ինձ համար դժուար է այդ կատարել, բայց ես յուսով եմ այդ ծանր պարտականութիւնը աջողութեամբ պսակելու, լաւ գիտակցելով, որ այդ գործի մէջ ինձ կօգնի ամբողջ ֆրանսիական ժողովուրդը»։

ՖՈՒԱԴ-ՓԱՇԱՅԻ ԿԱՐԾԻՔԸ

Պրոֆ. Լիւդվիգ-Շտէյն գրում է իր զրոյցի մասին, որ ունեցել է Ֆուադ-փաշայի հետ։

«Անգլիացիների Բաղդադից նահանջելուց յետոյ,—ասել է Ֆուադ-փաշան,—անգլիացիների ընդհանուր ռազմական դրութիւնը, իմ կարծիքով, դարձաւ աւելի դժուարին։ Մենք, բնականաբար, պէտք է քայլ առ քայլ հետևենք նրանց, մինչև որ նրանք նորից նաւեր նստեն և միանգամ ընդմիշտ թողնեն Բաղդադի մասին իրանց ունեցած միտքը։

«Մեր ձեռքով անգլիացիներից խլված նաւերը, պարզ է ինքն ըստ ինքեան, շուտով կը գործադրվեն անգլիացիների դէմ»։

Եգիպտոսի մասին արված հարցին Ֆուադ-փաշան պատասխանել է.

«Ես չեմ կարող ոչ մի մանրամասնութիւն հաղորդել առաջիկայ արշաւանքի մասին, բայց դուք կարող էք վստահ լինել, որ ամեն տեսակ պատրաստութիւն արդէն տեսնված է մեր կողմից, որպէսզի հարուած հասցնենք նրանց ամենախոցելի տեղը։ Գարնանը դուք կը տեսնէք ռազմագիտական բոլորովին նոր պատկեր, որը և կը համոզի մեր թշնամիներին, որ անհրաժեշտ է հաշտութիւն խնդրել մեզնից, այն պայմաններով, ի հարկէ, որ կը թելադրենք մենք և մեր քաջ դաշնակիցները»։

ԲԵԼԳԻԱՅԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Գերմանական լրագիրները հաղորդում են, որ գերմանական կառավարութիւնը յանձնարարել է ինչ-որ կապիտան Բիգարստի, որը ճարտարապետ է և Բելգիայի քաղաքացիական վարչութեան անդամ, մշակել մի նախագիծ՝ վերաշինելու գերմանական ռումբերով քանդված բելգիական քաղաքները՝ Լավէնը, Իպրը և միւսները։

Ասում են, որ այդ կապիտան Բեգարստը արդէն կարողացել է Տերմէնդում կառուցել ինչ-որ անշնորհք տներ XIV դարի քաղաքային տան կողքին, որպիսի տունը գերմանացիները հաւասարեցրել են հողին։

Այդ նոր կառուցումների առիթով ֆրանսիական լրագիրները աղմուկ են բարձրացրել։

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍՐԻ ԽՈՍՏՈՒՄԸ ՊԱՊԻՆ

Լրագիրները հաղորդում են, որ գերմանական կաթօլիկ կազմակերպութիւնները տեղեկութիւններ են ստացել Վիլհէլմ կայսրի այն վճռական խոստման մասին, որ նա արել է Հռոմի պապին, այն է՝ որ վերջինս վերականգնի իր եկեղեցական իշխանութիւնը, պապական կառավարութիւն սահմանելով Պաղեստինում, որի մէջ մտնելու է Երուսաղէմը և ամբողջ Սուրբ Երկիրը։ Յաֆֆան ծովային գլխաւոր կայանը պէտք է լինի պապական նոր շրջանի։

ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԳՈՐԻՑԱՆ

«Berl. Tag.»-ի թղթակիցը նկարագրում է աւստրիական Գորիցա քաղաքի դրութիւնը, որը գիշեր ու ցերեկ ռմբակոծվում է իտալական զօրքերից։

Քաղաքի 30,000 բնակչութիւնից մնացել է ընդամենը 100 մարդ։ Բայց և այնպէս մի քանի բնակիչներ վերադառնում են ետ։ Հողի վրա Գորիցան այլ ևս գոյութիւն չունի։ Հիմնված է նոր Գորիցա հողի տակ։ Նրա բնակչութիւնը ապրում է նկուղներում, կատակոմբաներում, ինչպէս նախնի քրիստոնեաները։ Ամեն օր քաղաքը լցվում է ռումբերով։ Քաղաքային վարչութեան պաշտօնական անձինք նոյնպէս նկուղներում են ապրում։ Մի մեծ նկուղի հենց մուտքի առաջ դրված է գրասեղան և ծղոտէ բազկաթոռ—դա ֆինանսական բաժանմունքն է. սեղանի ետևը ընկած է մի տոպրակ դարմանով լիքը—դա դիրեկտորի անկողինն է։ Կողքին գտնվում է պրեզիդիումը, աջ կողմը սանիտարական բաժանմունքն է, իսկ այն կողմը աղքատներին օգնող և ազգաբնակութիւնը ցուցակագրող կոմիտէն է։ Մի քիչ հեռու՝ գրող մեքենան է, նրա մօտ մի օրիորդ, յետոյ կարգով էքսպեդիցիան, հաշւապահութիւնը, գանձարկղը և խոհանոցը։ Բոլորը ապրում և աշխատում են նկուղներում։

Քաղաքի 2500 տնից քանդված և աւերակ են դարձած 1500-ից աւելին։ Ամբողջ քաղաքում մի սաղ ապակի չը կայ։ Իտալացիները աւերել են քաղաքին լոյս տուող գործարանները, և այդ օրվանից քաղաքը ապրում է առանց լոյսի։ Գիշերները քաղաքի վրա երբեմն պայթում են մի քանի հարիւր ռումբեր։ Մի ռումբ, 20,5 սանտիմետրանոց, ընկել է մի սրճարանի վրա, քանդել է տանիքը, փորել է փողոցը, և անձրևը այդ փոսը դարձրել է ջրի ու կեղտի մի ամբողջ լիճ։ Ռմբակոծութեան առաջին օրերում սպանվել է մօտ 100 մարդ, վիրաւորվել է 200 և մի քանի հարիւր էլ թեթև են վիրաւորվել։

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ 170,000 ԶՕՐՔԵՐ ՍԱԼՕՆԻԿՈՒՄ

Բուլղարական գլխաւոր զօրաբանակում գործող մամուլի բիւրօն հաղորդում է, որ իր ստացած տեղեկութիւնների համաձայն՝ անգլիական և ֆրանսիական ափ իջեցված զինուորների թիւը Սալօնիկում մինչև նոյեմբերի 25-ը հասնում էր ոչ պակաս քան 172,000-ի, որոնցից 110,000 ֆրանսիացիներ են, իսկ 62,000 անգլիացիներ։ Սակայն բուլղարական գլխաւոր բանակի տուեալներով այդ թիւը 120,000-ից աւելի չէ համարվում, որովհետև դաշնակիցների զօրքերից մօտ 50 հազար մշտապէս գտնվում են Սալօնիկում իբրև պահեստի զինուորներ, որոնք մասնակցութիւն չունեն պատերազմական գործողութիւններին։

Անգլո-ֆրանսիական նոր զօրքերի ափ իջեցնելու գործը Սալօնիկում, ըստ բուլղարների տեղեկութեան, անընդհատ շարունակվում է։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Գերմանական մի աէրօպլան մի քանի ռումբ նետեց Ռիգայի վրա։

◆ Պինսկից դէպի հիւսիս պարտիզանները խիստ աջողութեամբ գերեցին աւստրիական մի քանի օֆիցեր։

◆ Մեր ականակիրները անատօլիական ափերի մօտ բռնեցին թիւրքական մի բեռնակիր նաւ, որ բեռնաւորված էր ածուխով։

◆ Ինչպէս այժմ պարզվում է, ռումինական աւագ-մինիստր Բրատիանուի և ուրիշների տները պայթեցնելու փորձ անողները պայթուցիկ նիւթերը ստացել են Տեմեշվարի աւստրիական պահեստներից։

◆ Կոպենհագէնից հեռագրում են, որ գերմանական գեներալ Էմմիխը, որ վերցրեց Լիէժը, վախճանվել է։

◆ Աւստրիական սօցիալ-դեմօկրատները իրանց մի կոչի մէջ ընդգծելով Աւստրիայում տիրող տերրորը՝ ցանկութիւն են յայտնում, որ վերջինս պարտվի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ

(Պետ. Հեռ. Գործ.)

11 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Կ. Պոլսից հաղորդում են, որ Թիւրքաց կառավարութիւնը նոր զօրամասեր կազմակերպելու համար բռնութեամբ զէնքի է կանչում Թիւրքիայում բնակվող մահմեդական ալժիրցիներին, թունիսցիներին և պարսիկներին. վերջինները կրտ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՈՒՍԱՑԻ՛Ր

Մութ է, մութ է... Ոչ արև կայ,
Ոչ լուսին.
Սիրտս անզուսպ կարօտ կը զգայ
Ջինջ լոյսի...

Ես գիշերի չեմ դիմանայ,
Չեմ կարող.
Ոչ ոք ինձնից չի իմանայ
Խօսք կարող...

Հոգիս մաշվեց չասված խօսքի
Լծի տակ
Ու ժանգ կապեց լարըս ոսկի
Եւ միակ....

Դէհ, լուսացի՛ր—չեմ դիմանայ,
Չեմ կարող.
Քնած՝ են ողջ... չեն իմանայ
Երգ կարող...

Շուշանիկ Կուրղինեան

ԶԱՆԳԸ

(Հայկական մոտիվներից)

Ի՞նչ ես ղօղանջում, ինչ ես խնդարում
Մեռելութիւնը խեղճ հայ գիւղերի,
Չես տեսնում շուրջդ՝ ոչ ձայն, ոչ ծպտուն,
Գիւղ, տուն, արտ ու կարգ, ողջը՝ ամայի...

Սիրուն հայ կուսանք աղօթքի կը գան,
Բուրվա՞ռ կը ծխեն Փրկչի պատկերին,
Տէրտէր, տիրացու օրհներգ կը կարդան,
Խաչ, Աւետարան, սկիհը ձեռքին...

Կիսակործան են, պղծված տաճարներ,
Հայ կուսանք գերի են թիւրք հարեմներում,
Ի խաչ են հանված հոգևոր հայրեր,
Տէր ու պատանի շղթայված բանտում...

Ի՞նչ ես ղօղանջում, էլ ինչ ես պատմում
Աւերակներին, լուռ դիակներին...
Թէ... մի նոր կեանքի այդ ես աւետում
Դարեր տառապող հայոց աշխարհին...։

Լևոն Գրիգորեանց

ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄ

Ահա մի զոյգ մատաղ շիրիմ,
Երկու մանուկ վաղամեռ.
Ես թաղեցի յոյսերը իմ
Ու թևաւոր երազներ։

Անյոյս, անլոյս այս աշխարհում
Որպէս ճամբորդ յուսահատ
Ձեզ եմ գալիս, ձեզ եմ փարում,
Ո՛վ շիրիմներ հարազատ։

Ա՛խ, թող հանգչեմ ես ձեր կրծքին՝
Կեանքի բեռից պատռված,
Վերյիշելով երազը հին՝
Մարեմ մենակ ու անյաց։

Ց. Պետրոսեան

ԵՍ ԿԵՐԹԱ՛Մ ՈՒ ԿԱՊՐԵ՛Մ..

Ես կերթամ ու կապրեմ սարերում,
Չեմ ուզում փառք ու շուքն աշխարհի...
Ես վայրի, բիրտ կենցաղն եմ սիրում,
Դաշտերում անբռնա՛կ, ամայի...

Զորս բոլորքըս կանաչ թող լինի,
Որ գառները գընան, արածեն...
Խուրջինումըս և՛ հաց, և՛ գինի,
Եւ ծաղկո՛նք, որ բուրմո՛նք տարածեն...

Կը պառկեմ այն կանաչ խոտերում,
Կը նայեմ դէպ երկինքն աստղազարդ,
Կը փնտռեմ անհամար աստղերում
Աստղըն իմ, որ գունա՜տ է, գունա՜տ...

Սեդրակ Յովհաննիսեան

ԼԱԶԱՐԵԹՈՒՄ

(Էսկիզ)

Ռուսաստանի քաղաքներից մէկի լազարէթում գտնվում էին երեք հայ վիրաւորված զինուորներ...

Երեքն էլ առողջ, բոլորովին դեռ երիտասարդ, պարզ գիւղացի տղերք էին Ալէքսանդրապօլի գիւղերից...

Նրանք վիրաւորվել էին պատերազմի դաշտում։

Ես երբեմն այցելում էի նրանց. խօսում, մխիթարում, պատմում, կարդում նրանց համար... պատմում էի օրվայ նորութիւններից, խօսում էինք հայրենիքից, կովկասեան մեր վէրքերից, կարդում էի ժողովրդական հէքիաթներ, լրագրական տեղեկութիւններ երկրից, իրանց գաւառից, գիւղից...

Եւ բաւական էին նրանք, չափազանց բաւական...

Ես ևս զգում էի, որ օտարութեան մէջ ընկած խեղճ հայ վիրաւորված զինուորներին բաւականութիւն եմ պատճառում իմ այցելութեամբս. ինքս ևս մխիթարվում էի դրանով...

Մենք կապվել էինք իրար հետ։

Եթէ պատահում էր, որ երբեմն այցելութիւնս ուշացնում էի, իսկոյն նկատողութեան էի արժանանում...

— Մեզի մոռացաք, տէր հայր, խօսել, զրուցել կուզենք, սրտներս բաց անել,—լինում էր նրանց առաջին խօսքը ինձ ընդունելիս։

Լազարէթն ունէր վիրաւորվածների համար զանազան խաղեր և մի գրամմոֆոն...

Շատ յաճախ ես ականատես էի լինում նրանց խաղերին, երբեմն էլ լարում էին գրամմոֆոնը և մեծ հետաքրքրութեամբ լսում էին զանազան ռուսական ժողովրդական երգեր և զուարճախօսութիւններ. երբեմն էլ նոյն իսկ պարում էին...

Լսում էին և մեր խեղճ տղերքը նրանց երգը, նայում էին նրանց պարը, բայց երևում էր, որ չէին բաւականանում. այդ երգը տպաւորութիւն չէր գործում նրանց վրա...

Մտքովս իսկոյն անցաւ բերել հետևեալ անգամ մի քանի հայ ժողովրդական երգեր և բաւականութիւն պատճառել տղերանց...

Մտածեցի. բայց իրանց ոչինչ չասացի։

— Տղերք, թէ իմանաք ինչ եմ բերել ձեզ համար այսօր,—ասացի ես հետևեալ անգամ ներս մտնելով։

— Ի՞նչ, ինչ...

— Հայ երգեր, հայ ժողովրդական երգեր. հիմա, ա՛յ, սազը կը լարենք, և դուք կը լսէք հայ ժողովրդական երգեր...

Նրանց ուրախութեանը չափ չը կար։

Չը գիտէին թէ ինչ անէին։

Լարեցի գրամմոֆոնը, և նա սկսեց մեղմ կերպով երգել «Որսկան ախպէրը...»։

Մի վայրկեանում տղերանց դէմքը փոխվեց. նրանց երեսներին տխրութիւն, թախիծ երևաց...

Հարազատ երգը մի բոպէում, կարծես, հմայեց նրանց և մտքերով տարաւ հեռու, հեռու...

Նրանք երգի դայլայլիկների տակ, կարծես, մոռացված, ա՜խ ու վա՜խ քաշելով կանգնել էին գլխիկոր՝ գրամմոֆոնի մօտ...

Երգը շարունակվում էր, ես նորերն էի դնում...

Յանկարծ տղերանցից մէկը թողեց գրամմոֆոնը և կամացուկ հեռացաւ դէպի միւս սենեակը...

Ես իսկոյն հետևեցի նրան։

Նա ընկաւ մահճակալի վրա և երեսի վրա պառկեց...

Ես մօտեցայ... և ինչ... նա լալիս էր. հեկեկում էր...

— Ի՞նչ պատահեց քեզ...

Ոչինչ չէր պատասխանում...

— Ի՞նչ պատահեց քեզ, ա՛յ տղայ, ինչու ես լալիս...

— Ա՜խ, այս երգերը, այս երգերը. Նրանք ամբողջ հոգիս տակն ու վրա արին, նրանք քարուքանդ արին ներսս, տէր-հայր, էլ դիմանալ չը կարողացայ...

— Թուլասիրտ մի լինիր, զինուոր ես, քաջ եղիր, արիացիր, ինչ ես երեխայի նման ընկճվում, լալիս...

— Ո՛չ, ես թուլասիրտ չեմ. ես պատերազմից եմ գալիս, գնդակներից չեմ վախեցել, ընկճվել... բայց երգը, այս երգը... իմ հարազատ երգը տարուց աւել է, որ չէի լսել, քանդեց սիրտս, էլ սաղ տեղ չը թողեց, ամեն խարա բաց արեց, շատ բան յիշեցրեց՝ տուն, տեղ, ծնող, երեխայ, դաշտ, ձոր... Է՜հ, տէր-հայր, ի՛նչ ասեմ...

Ես կանգնած համոզում էի նրան։

Երգը լռեց...

Ես այդ օրը դուրս եկայ տղերանց մօտից չափազանց տխուր և զանազան մտածմունքների տակ...

Այդ դէպքից յետոյ՝ ես խոյս էի տալիս այցելութեանս ժամանակ հայ ժողովրդական երգեր բերելուց, թէև տղերքը խնդրում էին բերել... Ս. ք. Ասլանեան

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

I *)

Յիշում էք, ընթերցող, Շանթի «Երազ օրերի» մէջ՝ Երուանդի ընդհարումը Կարապետի հետ հայ լեզուի և հայ գրականութեան հարցի վերաբերմամբ։ Երբ Երուանդը յանդիմանում է Վարդուհուն՝ մայրենի լեզուն չը գիտենալուն համար, օրիորդի եղբայրը նկատում է՝

«— Սիրելիս, դա ճաշակի խնդիր է, ո՛ր լեզուն անուշ, գեղեցիկ ու գունագեղ է՝ այն ալ կը գործածեմ. տառը վրայ ի՛նչ խօսել արժէ»։

Ես շարունակում եմ այդ բնորոշ կտորը հեղինակի խօսքերով։

«— Ուրեմն հայերէնը տգեղ է՝ ըսել կուզէք։

«— Շիտակը խօսելով, շատ գեղեցիկ չեմ գտներ։

«— Սակայն, բարեկամ... ուրկէ հասկցաք հայերէնի տգեղ լինելը, քանի որ ո՛չ ալ մեր գրականութիւնը կը ճանչնաք։

«— Է՛, ինչ կայ որ՝ ինչ ճանչնամ. ըսէք տեսնեմ ո՞րն է հայերէն բանաստեղծութիւնը, գրականութիւնը, գեղարուեստը. ինչ կայ»։

«— Բայց եթէ նոյնիսկ բան մը չունինք՝ յանցանքը ո՛չ թէ ձեր «տգեղ» անուանած լեզուինն է, այլ ձերը, պ. Կարապետ։

«— Ե՞ս։

«— Այո, ինչու զարմացաք, յանցանքը ձերն է. ձերն է ու իմը. մեր երիտասարդութեանը... Մենք փոխանակ մեր կեանքը ուսումնասիրելու, մեր ուղեղը աշխատեցնելու, մեր բնական ունակութիւններուն հնարք տալու՝ կը բաւականանանք ուրիշներուն ստեղծածովը պարծենալով։ Այո, յանցանքը մերն է, որ դեռ չունինք այնքան ազնիւ հպարտութիւն, այնքան նուրբ պար-

---

*) Վերանորոգելով՝ երկար տարիների ընթացքում ընդհատած՝ գրական պարապմունքներս, անչափ ուրախ եմ, որ այս առաջին յօդուածս նուիրում եմ պ. Սողոմոն Եղիազարեանի պրօֆեսօրութեան 30-ամեայ յոբելեանին, որ լրանում է դեկտ. 14-ին։

յուկ կերպով հրաժարվում են մտնել գործի մէջ։ Այդ առիթով պարսից դեսպանատունը բողոք յայտնեց կառավարութեանը։

Թիւրքերը կազմակերպում են 150,000 հոգուց բաղկացած զօրաբանակ Պարսկաստանում գործելու համար։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
11 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Րիգայի զօրաճակատի վրա մեր արտիլլերիան աջողութեամբ գործում էր գերմանացիների դէմ Պուլկարնից դէպի արեւելք և Րիկկիւլի առաջ։ Մեր կրակը ստիպեց ետ դառնալ թշնամու աէրօպլանին, որ դիմում էր դէպի Րիգա։

Ֆրիդրիխշտադտից դէպի հարաւ գերմանացիք գետի վրայով արձակեցին մեր խրամատների դէմ մի քանի մեծ ականներ։

Դվինսկի շրջանում, Իլլուկստի մօտ ձեռքի ռումբերով գործողութիւնները սաստկացել են։ Մեր արտիլլերիան շատ տեղերում աջողութեամբ գործում էր բերդեր կառուցանող գերմանացիների դէմ։

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն.

Մեր արտիլլերիան որոշ գործունէութիւն ցոյց տուեց Արտուայում՝ Ժիվանշի շրջանում և Լիլի ճանապարհի մօտ։ Մենք աջողութեամբ ռմբակոծեցինք թշնամու աւտոմօբիլները Կոնդէի և Նանրէյլի միջև։ Մեզ համար նպաստաւոր ականային կռիւ տեղի էր ունենում Վէվրում, Ապրեմօնի անտառից դէպի հարաւ-արեւելք։ Վօգէզներում թշնամու ձախ զօրաթևը ետ քաշվեց դէպի իր նախկին դիրքերը։ Մենք պահեցինք մեր ձեռքում բոլոր գրաւած դիրքերը 2 կիլօմետր տարածութեամբ։

Զինադադարի մրրիկը երեկ կէսօրից յետոյ դադարեցրեց պատերազմի գործողութիւնները։

Թշնամին ուժեղ ռմբակոծութեան ենթարկեց Հարտմանս-Վէյլէրկօպֆի լեռնագագաթը։

ՀՌՕՄ. — Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Ամբողջ զօրաճակատի վրա թնդանօթաձգութիւն է։ Թշնամին ռմբակոծութեան ենթարկեց մի քանի տներ, պատճառելով նրանց վնասներ։ Մեր արտիլլերիան ռմբակոծեց Լէվիս երկաթուղային կայարանը, նաև զօրանոցները և այլ զինուորական շէնքեր Տօլմինօյում։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ Հեռ. Գործ.)
11 դեկտեմբերի

ԹԷՀՐԱՆ. — Պարսկաստանի հարաւի հետ հեռագրական ուղղակի հաղորդակցութեան խզման պատճառով այնտեղից ստացվող տեղեկութիւնները կցկտուր են։ Ըստ երեւոյթին Շիրազի շրջանում արդէն մի քանի օր է տեղի են ունենում ընդհարումներ ապստամբված ժանդարմների և շահին հաւատարիմ մնացած կառավարական ուժերի միջև, որոնց առաջնորդում է Շիրազի նահանգապետ Կավամ-Միւլքը, որ կողմնակից է Պարսկաստանի, Ռուսաստանի և Անգլիայի միջև համերաշխութիւն հաստատելուն։ Կավամուլ-ուլ-Միւլքը իր ձեռքի տակ ունի իրան հաւատարիմ տեղական հինգ ցեղեր և, գտնելով մի քանի նշաններից, մասամբ հզօր վաշկայցի ցեղին։

Երէկ գիշեր անյայտ մարդիկ նորից մայրաքաղաքի փողոցների պատերին փակցրին կոչեր սրբազան պատերազմի յորդորով, որը բղխում է իբր թէ Նէջէֆ սրբազան քաղաքից։ Նէջէֆը գտնվում է թիւրքերի ձեռքում։

Ստացվել են դեկտ. 9-ին մայրաքաղաքի մօտ տեղի ունեցած կռւի մանրամասնութիւնները։ Ճակատամարտը տեղի ունեցաւ Թէհրանից 20 վերստ հեռաւորութեան վրա։ Ռուսները բարդ զօրաշարժումներով կտրեցին թշնամու ճանապարհը մօտենալու Թէհրանին և, շրջապատելով նրան հարաւից, հիւսիսից և արեւմուտքից, սկսեցին թնդանօթային կրակով նօսրացնել հակառակորդի շարքերը։ Վերջինս, նեղվելով մեզանից, ետ քաշվեց մայրաքաղաքի ուղղութեամբ. սակայն Րաբաթ-Քէրիմի և Քերէջի միջև ռուսական զօրքերը, մօտենալով հիւսիսային և հարաւային կողմից, նրա առաջը կտրեցին։ Էմիր-Հիշմէթի ձիաւորների և Հասան-Աբայի ժանդարմների մէջ սկսվեց սարսափ։ Կօզակների յարձակումը աւարտեց հակառակորդի լիակատար պարտութիւնը, որ կռւի դաշտում թողեց 118 սրախողխող եղած և մի քանի տասնեակ սպանված հրազէնով. 70 հոգի գերի ընկան. վիրաւորների թիւը պարզված չէ։ Մեր կորուստներն աննշան են. սպանվել է մի օֆիցեր և վիրաւորվել է մի կօզակ։ Հակառակորդը ձգելով զէնքը, ցիրուցան եղաւ։

Մի վիրաւոր ժանդարմ, որին աջողվեց լեռնային կածաններով իրան Թէհրան գցել, լրացնում է դեկտեմբ. 11-ի ճակատամարտի պատկերը։ Ապստամբների թիւը 1300 էր, որոնցից 800 ձիաւոր և 500 ժանդարմ Էմիր-Հիշմէթի, Ալիխան Սիահբուհի և Մունդասիրադ-Դովլէի հրամանատարութեամբ։ Նրանց մէջ տիրում էր մեծ ոգեւորութիւն շնորհիւ այն անհեթեթ լուրերի, որ հաղորդել էին նրանց բարեկամները Թէհրանից։ Ժամը 2-ին պարսիկների բոլոր ուժերը հաւաքվեցին, պարագլուխները դիմեցին նրանց ճառերով, մատնանշելով որ նրանց ետեւում ընկած է մայրաքաղաքը, որ սպասում է նրանց յաղթութեան, որպէսզի աւարտվի ռուս զօրքերի պարտութիւնը և որպէսզի նրանք վանվեն դէպի Կասպից ծովը, յետոյ կարելի լինի անցնել և միանալ գերմանական և թիւրքական այն հրոսակախմբերի հետ, որոնք դիմում են դէպի Պարսկաստան։ Այդ ժամանակ որոտացին ռուսական թնդանօթները, որոնց հետեւցին գնդակացիրները. երկինքը ծածկվեց խիտ ծխով, բարձրացաւ սոսկալի փոշի, որ յատուկ է Իրանի անապատին. ձիաւորների և ժանդարմների շարքերում սկսվեց իրարանցում. կազմալուծութիւնը լիակատար էր. պարսիկները փախուստի դիմեցին, բայց բոլոր ճանապարհները ռուս զօրքերը բռնել էին։ Ապստամբների պարագլուխները, որ այնպէս երփներանգ գոյներով էին նկարագրում Պարսկաստանի հանդէս գալը Գերմանիայի և Թիւրքիայի հետ միասին, հէնց կռւի սկզբին Էմիր-Հիշմէթի հետ անյայտացան, և երբ ռուսները յարձակման նետվեցին, ապստամբների մնացորդները վայրկենապէս սրի քաշվեցին։ Ժանդարմի ասելով ռուսաց զօրքերը շարունակում են գրաւել շրջակայ գիւղերը, փախած ապստամբներին որսնելու համար։

(Սեփ. Թղթակցից)
Րաշտ, 4 դեկտ.

Սպահանի գերման ներկայացուցիչների ղեկավարութեամբ կազմված մուջէհիդների բանակը մի քանի մուշտէիդների ղեկավարութեամբ արդէն ճանապարհվել է դէպի Համադան. վերջիններս ամբոխի կրօնական զգացումներն աւելի բորբոքելու համար վերցրել են իրանց հետ Ամիր-էլ-Մօմինի վերարկուն և իմամ-Հուսէյնի դաւրանը։ Ղումի կոմիտէն էլ արդէն մի շրջաբերականով դիմել է պարսիկ կուսակցութիւններին, որ ներկայ պատմական օրերին մի կողմ թողնեն կուսակցական մանր վէճերը, միանան Իսլամի դրօշակի տակ, դուրս գալու Իսլամի թշնամիների դէմ։

Ռուսական յաղթական բանակի առաջխաղացումը դէպի Համադան շարունակվում է. ապստամբ ժանդարմներն և մուջէհիդներն Աւէջում և Սուլթան-Բուլաղում (Ղազվինի և Համադանի միջև ընկած ճանապարհին) լաւ ջարդվելուց յետոյ գլուխները կորցրած, սարսափահար Համադանից փախչում են Քիրմանշահ, որտեղ գտնվում է այժմ Թէհրանի գերմանական դեսպանը։

Գերմանօ-թիւրք գործակալներն ամեն կերպ աշխատում են՝ որչափ կարելի է Քիրմանշահի շրջանը իրանց համար ապահովել, եթէ ռուսական յաղթական բանակը մուտք գործի այդ շրջանը, որը շատ հաւանական է. այդ դէպքում Պարսկաստանը կորցնելով Թիւրքիայից՝ գերմանացիների պարսիկ ամբոխի վրա դրած յոյսերը միանգամայն ջուրը կընկնեն, և Պարսկաստանում վերջ կը դրվի գերմանօ-թիւրքական պրովօկացիոն քաղաքականութեան։ Վ.

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
11 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ներքին գործերի մինիստրութիւնը առաջարկեց նահանգապետներին մատնանշել զինուորական ատեաններին, որ այն ուսանողները, որոնք չեն կամենայ զրկվել 1-ին կարգի արտօնութիւններից, պէտք է ներկայացնեն անհրաժեշտ ապացոյցներ ժամանակամիջոց խնդրելու հետ միասին։ Ժամանակամիջոց տալը և արտօնութիւններ որոշելը վերապահվում է յիշեալ ատեաններին։

Բարձրագոյնս հրամայված է 1915 և 1916 թ. թ. զինուորական ծառայութեան կանչվող երիտասարդներին նրանց, որոնք աշխատում են պետական պաշտպանութեան կարիքների համար, տալ ժամանակամիջոց մինչև 1916 թ. մարտի 12-ը։

Սո դեկտեմբերի 8-ը փախստականների յատկացված գումարը հասաւ 96.788,663 ր.։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինի շվէդական դեսպանը յայտնում է, որ գերմանական իշխանութիւններն ազատել են շվէդական «Արգօ» շոգենաւը, որովհետև հաստատվել է, որ նա բռնվել է Շվէցիայի ջրերում։ Գերմանական ծովային շտաբը այդ առիթով ցաւակցութիւն յայտնեց։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ. — Լրագիրների ասելով Ֆօրդը մեկնել է Բերգէն՝ Ամերիկա վերադառնալու համար։

ԼՕՆԴՕՆ.—Համայնքների պալատում Րէնսիմէնը ասաց. «Առևտրի վերաբերմամբ Գերմանիան պէտք է իրան վերջնականապէս պարտված համարէ։ Ներկայումս անգլիացիների պարտականութիւնը կայանում է նրանում, որպէսզի թոյլ չը տալ նրան նորից գլուխ բարձրացնել պատերազմից յետոյ։ Ոչ մի այնպիսի հաշտութեան Անգլիան չի համաձայնի, որ ներհակ լինի դաշնակիցների շահերին»։

ՑԻՒՐԻԽ.—Պաշիչն եկաւ Սկադրից շնորհաւորելու չէրնօգօրական թագաւորի անուանակոչութիւնը։

ՍՈԼՈՒՆ.—Եկաւ անգլիական խումբը սըր Էդուարդ Բօյեալի գլխաւորութեամբ Ցոնաստան ապաստանած սերբ փախստականներին օգնութիւն ցոյց տալու համար։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
11 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց հաստատել սինօդի վճիռը՝ Պիրր վարդապետին Ալլահվերդիի եպիսկոպոս և վրաց էկզարխութեան վիճակային յաջորդ նշանակելու մասին։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.—Հաագայից հեռագրում են. «Միւնստէրում վառօդի գործարանի պայթումի ժամանակ սպանվեցին 400 բանւոր. գործարանային շէնքերը և նրանց մօտի շատ շինութիւններ ոչնչացել են։ Պայթումի պատճառը պարզված չէ»։

ՏՕԿԻՕ. — Ի նկատի ունենալով որ համաշխարհային շուկայում պակասում են կարմիր գոյն տուող իրեր, կազմվեց ռուս-եապօնական ընկերութիւն՝ ներկեր պատրաստելու համար։

Ստորին պալատը հաւանութիւն տուեց այն նախագծին, որի համաձայն փողերանոցը ընդլայնվելու է ռուսական արծաթէ դրամի պատուէրների առիթով։

Լուրերի համաձայն, Ցինդաօյում գտնվել է գերմանական-ասիական բանկի թաղած 700,000 ոսկին։

Ջրասուզված «Իօսակամարու» նաւի վրա կար եապօնական կառավարութեան մի միլիօն իէն ոսկի։

ՍՏՕԿՀՕԼՄ. — Սաստիկ ցրտերի պատճառով 39 շոգենաւ մնացել են սառոյցի մէջ Ստօկհօլմից դէպի հիւսիս։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ.—Նորից թոյլատրվեց իւղի արտահանութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ

Ստացանք 1) Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսի դիւանատնից, Նորին Վեհափառութեան կարգադրութեամբ՝ 3000 ր., 2) Յանձնաժողովի նախագահ Դաւիթ խան Ալան Ուզբաշեանից՝ 7000 ր., 3) Թիֆլիսի քաղաքագլուխ Ալէքսանդր Խատիսեանից, պ. Յ. Մանթաշեանի գումարից, «Тиф. Листокъ» լրագրի խմբագիր Խ. Խաչատրեանի միջոցով՝ 1000 ր., 4) Պարիզից, վսեմ. Պօղոս-փաշա Նուպարից, Վեհ. Կաթողիկոսի դիւանատան միջոցով՝ 4000 ր., 5) «Тиф. Листокъ» լրագրի խմբագրութիւնից, Նպաստամատոյց Ընկ. միջոցով 300 ր.։ Ընդամենը 15.300 ր.։

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Բաթումից, Մ. Եկենեանի միջոցով, ստացված Յակոբ Աստուածատրեանից 6 ռուբլի։

30-ԱՄԵԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Վաղը, դեկտեմբերի 14-ին, լրանում է Կիեվի Համալսարանի պրոֆեսոր Սողոմոն Եղիազարեանի ուսուցչապետութեան 30-ամեակը։

Անկասկած, պրոֆեսոր Ս. Եղիազարեանը, իբրև գիտութեան մէջ անուն և համբաւ ստացած մի անձնաւորութիւն, պատիւ է բերում ոչ միայն իրան, այն համալսարանին և գիտութեանը, որին սպասաւորում է, այլև հայ ազգին, որի արժանաւոր զաւակն է նա։

Պրոֆեսոր Եղիազարեանը ոչ միայն կրթել է ուսանողական ամբողջ սերունդներ, այլև գանձեր է մտցրել գիտութեան մէջ, մեր երկրին վերաբերեալ ուսումնասիրութեան գործի մէջ։

Ուրիշ պայմաններում, աւելի երջանիկ և բարեբաղդ օրերում, հայ ազգը, հայ մտաւորականութիւնը կարող էին մասնակցել յարգելի պրոֆեսորի բազմարդիւն և բեղմնաւոր գործունէութեան յօբելեանին, բայց ներկայ մեր համաժողովրդական սուգը զըրկում է մեզ հնարաւորութիւնից՝ մասնակցել այդ համակրելի յօբելեանին։

«Մշակը», հանդիսանալով թարգման հայ

տաճանաչութիւն մեր սեփական ուժերը գործադրելու, մեր յատուկ ստեղծագործութիւնները ունենալու, մեր կեանքի խճողումը ու մեր երևակայութեան սլացքները արտայայտելու։ Երբ տեղը գայ, ինքզինքնիս ու մեր կեանքը ծաղրել գիտենք. բայց ասկէ անդին՝ ոչինչ»։

Ութ օր էլ առաջ՝ նոյն Սրուանդը՝ Տուրգենեվի «Նախընթաց իրիկունը» վէպի ընթերցանութեան ազդեցութեան տակ՝ իր «յուշատետրի» մէջ գրում է. «Ե՞րբ մենք ալ այդ տեսակ երիտասարդութիւն մը պիտի ունենանք արդեօք. Ինսարօվներ, նպատակով մը ոգևորուած էակներ, որոնք համալսարաններէ նոր ուժերով դառնան իրենց հայրենիքը, ոչ թէ հանգիստ օրեր ու ոսկի դիզելու, այլ ամեն խաչընդոտ արհամարհելով ժողովրդի մէջ մտնելու, հանրային նպատակի մը աջակցելու, եթէ ոչ նոյնիսկ զոհ երթալու համար. ուր է սկզբունքի համար ամեն բան զոհող անհատ մը. ուր է»...

Շանթի վէպիկը գրված է 1896 թւին, և նրանից քաղված այդ կտորները արտայայտել են հեղինակին ժամանակակից հայ կեանքի տգեղ երևոյթներից գրեթէ ամենատգեղը...

Բայց միևնոյն երևոյթները չէին արձանագրում արդեօք դեռ յիսնական, վաթսունական և եօթանասնական թւականների ռուսահայերիս ազնիւ գործիչները։

Մի՞թէ Աբովեանի ցաւը այդ նոյն երևոյթից չէր բղխում, երբ՝ տեսնելով «որ էլ հայի գիրք ձեռն առնող, էլ հայի լեզուն խօսող քիչ ա գտնվում», «վա՜յ» էր տալիս «էն խալխին, որ ինքն իր կեանքն, աշխարհը չի պահպանիլ»։ Մի՞թէ «Հիւսիսափայլի» աշխատակիցները չէին, որ՝ քարոզելով «մայրենի լեզուի, մայրենի բարբառի» անհրաժեշտութիւնը՝ հայ երիտասարդին ասպարէզ էին կանչում՝ ազգութեան շահերին ծառայելու։ Իսկ Րաֆ. Պատկանեա՞նը... դա հօ բողոքի կատարեալ մարմնացումն էր, մի բուռն բողոք «մայրաքաղաքում կրթված հայ երիտասարդի» հասցէին, որ

Ցեղը եկաւ՝ հայ է նա, տեղը եկաւ՝ այլազգի,
Իրօք ոչ այդ և ոչ այն է, այլ ծնունդ մի նոր ազգի .

և նոյն «մայրաքաղաքում կրթված հայ աղջկայ» դէմ, որի «սիրտը կանէ тукъ тукъ» «гвардеецъ»-ին սպասելիս և որն իրան երբեք չէ «մտնի» «անշնորհ ու տգէտ» հայերին, որոնք ոչ գնահատել գիտեն, ոչ էլ սիրել, «ինչպէս ցանկանում ես»... Մի՞թէ Դր. Արծրունին չէր շեշտում մայրենի լեզուի անհրաժեշտութիւնը, երբ գրում էր՝ «Հազիւ է պատահում, որ մարդը օտար լեզուի միջոցով արդիւնաբերէ մի ինքնուրոյն միտք»։ Մի՞թէ նա չէր դատափետում («Ժամանակաւոր իդէալիստներ») կարիերիստ, իդէալներից զուրկ մեր երիտասարդութիւնը, որ ուսանող օրերին մեծ-մեծ խօսել գիտէ ազգութեան անունից, իսկ կեանք մտնելով՝ մնում է միևնոյն եսասէր, հասարակական ասպարէզից երես դարձնող [illegible]...

Եթէ մենք դիմենք աւելի նոր գրողների գրուածքներին, օրինակ՝ Մուրացանի «Նոյի ագռաւին», որ Շանթի «Երազ օրերից» մօտաւորապէս տասը տարով առաջ է տպվել, մենք այստեղ էլ կը տեսնենք, թէ ինչպէս Սարգիս-ապէրը ցաւում է, որ նրա մինուճար Վանին, «օխտը սարի քամակին» ուսումն աւարտած որդին, երիտասարդութեան երդումներին դաւաճանելով՝ Թիֆլիսում կարիէրի ետևից է ընկել։

« — Ես իմ տղին յուսում էմ տալել, որ առաջ իմ օջախը շինի, իմ հանգած ճրագը վառի, իմ տանը հարս բերելով՝ ինձ ու իմ պառաւին ուրախացնի, հետն էլ իրա յուսումով էս խաւար գեղը լուսաւորի, մեր խեղճ ու հայվան շինականին կռուից, բեզարից ազատի... Միտքում եմ, որ ասէք՝ հօվ ա մեղաւոր, որ գեղի քահանան Տէր-Մակուչն ա. հօվ ա մեղաւոր, որ եղցու (եկեղեցու) առաջը անապատ ա. հօվ ա մեղաւոր, որ գեղը կեղտոտ ա, տները տափից կպած, հայաթները թրքով լիքը, քուչէքը ծուռ ու մուռ... Ասացէք, տեսնամ. հօվ ա մեղաւոր, խեղճ գեղականը, թէ նոյի ագռաւները։ Ախր ինչքի՞ն հմի էս գեղարանքից մի տասը, քսան տղայ գնացել են յուսում առնել, լուսաւորվել. հմի ուր են, ընչի՞ նրանցից մինն ու մինը եդ չեկաւ, որ իրա հօր օջախը վառի, իրա վաթանը (հայրենիքը) պայծառացնի, որ գեղացին հէնց մէն օրինակ էլ ա տեսնի ու ասի թէ՝ «ղորթ ա, յուսումը լաւ բան ա, եկէք մենք քար ու քացախ ուտենք, ամա մեր ըխեանց յուսում տանք, լուսաւորենք»...

Բայց գուցէ կարծում էք, ընթերցող, որ մեր գրագէտների երկար տարիներ բողոքող ձայնը այժմ զուրկ է գրական հիմքից, որ մեր կեանքի վերջին տասնամեակում՝ նրանց նուիրական իղձերից ամենանուիրականը գոնէ մասամբ իրականացել է...

Նայեցէք ձեր շուրջը...

Ինչու մեր աշխարհիկ լեզուն այդ աստիճան աղաւաղված է, ինչու մեր գրականութիւնը այդքան աղքատ, ինչու մեր լրագրութիւնը մի օր կուշտ, երկու օր էլ՝ տկլոր...

Հէնց գիմնազիայի դասից անցած՝ մենք արդէն սկսում ենք մոռանալ մայրենի լեզուն։ Համալսարանում՝ ընկերական ժողովներին, ճիշդ է, մենք դեռ չենք դադարում հայութիւն փրկելու ծրագիրներից, բայց... հայերէն գիրք կարդալու, հայ գրողներին ուսումնասիրելու ժամանակ չունենք. մենք ծանրաբեռնված ենք «համաշխարհային» անուն հանող հեղինակների գրուածքներով։ Կեանք մտնելիս՝ հօ բոլորովին հեռանում ենք հայ գրական խօսքից։ Ժամանակ կա՞յ որ... Եւ ինչ կարող է տալ խեղճ հայի խեղճ գրողը համալսարանաւարտ լուսաւորվա՞ծ գլխին, նուրբ զգացմունքներին և հարուստ սրտին...

Երիտասարդ օրերիցս այդ եմ ես լսել ինձ շրջապատող հայ համալսարանաւարտների մեծամասնութիւնից, և այժմ՝ երբ երիտասարդութիւնս ջուխտ ձեռքով թաղել եմ, պրծել՝ միևնոյնն եմ տեսնում...

Հայը շատ ներող է դէպի այլազգին և անչափ հպարտ՝ իրայինների առաջ։ Օտարի ագռաւը նրան անհամեմատ քաղցր է հայրենիքի սոխակից։ Հայը գիտէ գնահատել, բայց ոչ ազգակիցներին։ Չափազանց ընդօրինակվող՝ նա Ֆրանսիայում ֆրանսիացի է, Լեհաստանում՝ լեհ, Ռուսաստանում՝ ինչ որ ուզում էք, միմիայն ոչ հայ... Տեսնվա՞ծ բան է, որ ռուսահայերիս համալսարանաւարտը՝ առաւօտեան սուրճը խմելիս՝ մանրակրկիտ հետաքրքրութեամբ չը ծամի տեղային ռուս թերթի հերթական համարը։ Խօսք չը կայ, փառք և պատիւ նրա հասարակական ըմբռնումներին, բայց շատերը այդ պարոններից՝ գոնէ շաբաթը մէկ անգամ՝ ձեռք են տալիս հայ լրագրի պատահական համարին։

Եւ իրաւունք ունենք գանգատվել, թէ հայ լրագրութիւնը աղքատ է և բովանդակութեան և ծաւալի կողմից։ Ի՞նչ ենք տալիս մեր լրագրութեանը, որ պահանջներս ինչ լինի։ Ամբողջ ռուսահայութիւնը չի կարողանում գոնէ մէկ ամսագրի գոյութիւնը ապահովել։ Հայ գրքերը՝ խանութներում թափված՝ առնողների և ընթերցողների են սպասում։ Հայ գրողը դեռ ես ստիպված է գործակատարի պաշտօնով և կամ գրագրութեամբ իր ապրուստը հայթայթել, որովհետև գրչի եկամուտը սև հացի գինն էլ չի հանում։

Դեռ Րաֆ. Պատկանեանը գանգատւում էր՝ «Հինգ-միլիոնեայ հայ ազգը կարդացել է, կարդում է, լսում է, երգում է իմ գրուածքը, շատ մասը նոյն մինչև անգամ անգիր գիտէ, բայց շատ երկրայելի է, որ նա 40—50 կօպէկ տայ և գնէ իմ շարադրութիւնները։ Մի՞թէ ձեզ մինչև այժմ յայտնի չէ, որ հայի մէջ հայի գիրքը, հայ լրագիր տարածվում է միայն միջնորդների և հզօր աղանիների ձեռքով և այն՝ հազար մուննաթներով»...

Զուրկ ազգային պարտաճանաչութիւնից՝ մենք մեր քթից դէնը բան չենք տեսնում։ Այդ է պատճառը, որ երբ ներկայ համաշխարհային անցքերը կուտակեցին մեր գլխին ամպ ու կայծակ, մենք, ապշելով, տեսանք, թէ ոչինչ պատրաստ չենք, որովհետև միշտ եղել ենք լաւ կատարողներ և վատ մտածողներ... Երկար տարիների ընթացքում մենք չը կարողացանք պատրաստել ոչ ժողովուրդը, ոչ էլ հասարակութիւնը՝ սպասելիք մեծ գործին։ Անտարբեր դէպի ազգային վերածնութիւնը՝ մենք բռնված էինք անձնական միտումներով։ Երբ մեր հարևանները ճանաչում էին միմիայն մեր չարչիութիւնը, մեր տգիտութիւնը, մեր «трусъ» և «рабъ» լինելը, ո՞ւմ ցաւն էր հայի անունը ցեխից հանելու։

Ինչու մի ազնիւ Պէսալօվսկի պէտք քըրտինք թափէր, գրիչ կոտրէր ռուս հասարակութեանը հասկացնելու, որ հայն էլ աշխատասէր, լուսասէր ժողովուրդ է, որ նա փառաւոր անցեալ ունի, հարուստ հին գրականութիւն և նորագոյն տաղանդաւոր գրողներ. ինչու մի պատուարժան Բրիւսօվ՝ դեռ հայերէնին լաւ չըտիրապետած՝ պիտի շտապէ բանալ ռուս ընթերցողի առաջ հայ բանաստեղծութեան գոհարները, իսկ մե՞նք, մենք պիտի լռենք և կամ լուռ էլ ծափահարենք... Մի՞թէ հայ երիտասարդութեան պարտաւորութիւնը չէր ծանօթացնել մեր հարևաններին հայի իդէալների, ձգտումների, սպասումների հետ։

Ցանկարծակի եկած քաղաքական դէպքերը ակնյայտ ցոյց տուեցին թէ ներքին և թէ արտաքին մեր քաղաքականութեան և քաղաքակրթութեան սնանկութիւնը... Բայց համոզեցին նրանք հային ձեռք վերցնել իր պապական առանձնայատկութիւններից, առանձնայատկութիւններ, որոնք՝ դարեր շարունակ՝ արիւնով ողողեցին խեղճ Հայաստանը, իսկ հայութիւնը մօտեցրին ջնջման սահմանին։ Դադարեցինք մենք օտարի սեղանի փշրանքները լիզելուց։ Հասկացա՞նք վերջապէս, որ ազգի ուժը նրա խմբված անդամների համերաշխութիւնից է բղխում, որ իրար դէմ լարված նախանձով, իրար փորփրելով՝ մենք մեր ձեռքով մեր տունն ենք քանդում։ Արդեօք իրաւունք չունենք կրկնելու ներկայ սերնդի մասին նոյն յուսահատութեան տողերը, որ մի ժամանակ բանաստեղծը շպրտել է իր ազգակիցների երեսին։

Որքան սիրեցի ես իմ հայրենին,
Այնքան էլ ջոկ-ջոկ ատեցի հային.
Չը տուեց ազգիս չար աստուածութիւն
Ոչ մի ազգաշէն առաքինութիւն...
Ազգասիրութիւն, ինքնանուիրութիւն,
Կեղծաւորութիւն, խոր տգիտութիւն,
Շռայլ կեանք, ազնիւ զոհէ միշտ փախուստ,
Հայ եղբօր նիւթող օր-գիշեր կորուստ,
Իւր հարազատին արիւնը ծծող,
Օտարի առջև շան նման քծնող...
Լուսաւորութեան իբրև թէ ձգտող,
Հայ գիտնականքըն յաւերժ հալածող
Իւր անձնէն ի զատ մարդ չի ճանաչել

մտաւորականութեան զգացումներին, և իբրև հայ մամուլի աւագագոյն օրգան, ողջունում է բազմարդիւն պրոֆեսորի 30-ամեայ գործունէութեան յոբելեանը, մաղթելով նրան այսուհետև եւս նոյն բեղմնաւոր գիտական գործունէութիւնը յօգուտ գիտութեան և քաղաքակրթութեան, յօգուտ այն համալսարանի, ուր ուսանում են բազմաթիւ հայ ուսանողներ։

Ի մասնաւորի «Մշակը» ողջունում է և իր հնագոյն աշխատակցի գիտական գործունէութիւնը յօգուտ հայ գրականութեան։

Հ. Ա.

ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ 34-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ

II

Բանւորութիւնն ու համագումարը

Նաւթարդիւնաբերողների համագումարը հանդիսանում է իբրև հաւաքական հաստատութիւն միևնոյն պարապմունքի տէր քաղաքացիների։ Օտար տարրերը նրա աշխատանքներին մասնակցելու իրաւունք չունեն։ Սակայն համագումարը իր վրա է վերցրել մի շարք հասարակական գործունէութիւններ, որովհետև նաւթարդիւնաբերութեան շրջանում, ուր կուտակված է մօտ 100,000 բնակչութիւն, գոյութիւն չունի որևէ ուրիշ՝ հասարակական կարիքները հոգացող ինքնավար կազմակերպութիւն (քաղաքային կամ զեմստվային ինքնավարութիւն)։ Այդ պատճառով համագումարը՝ լինելով զուտ արհեստակցական կազմակերպութիւն՝ կատարում է և տեղական ինքնավարութեան պաշտօն, դառնալով մի ատեան, որին ուղղվում են զանազան դիմումներ և պահանջներ։ Հարկաւ, աւելի շատ դիմումներ լինում է բանւորութեան կողմից։ Չէ որ համագումարի որոշումներով աւելի շատ նրանք են շահագրգռված, չէ՞ որ համագումարի մէջ բազմածները և նրանց բանւորական ույժի գործադրողներն են։ Եղել է անցեալում նոյնիսկ մի համագումար, որին խորհրդակցական ձայնով մասնակցել են բանւորութեան ներկայացուցիչները։ Հէնց այդ համագումարին (1908 թ.) լայն քննութեան նիւթ է եղել բանւորական աւանների հարցը։

Այս 37-րդ համագումարին բանւորութիւնը մասնակցութիւն ցոյց տուեց՝ մի հանրագիր մատուցանելով նախագահ իսկական պետական խորհրդական Ժակին։ Ի՞նչ կարիքների վրա է մատնանշում բանւորութեան հանրագիրը։

Նախ և առաջ ապրուստի թանգութեան վրա։ Պատերազմի յայտարարումից յետոյ կեանքի համար ամենաանհրաժեշտ իրերի արժէքը բարձրացել է 40 տոկոսով, այն ինչ բանւորների աշխատավարձը (այն էլ ոչ բոլոր ֆիրմաներում) ստացել է յաւելումն 15—20 տոկոսի։ Սրա դիմաց բարձրացել է նաւթի գինը և արդիւնաբերողները խոշոր օգուտներ են գանձում։ Բանւորութեան տնտեսական կացութիւնը խիստ պակասաւոր է և պահանջվում է աշխատավարձի զգալի յաւելումն։

Բանւորութեան բնակարանային դրութիւնը նոյնպէս պակասաւոր է և անմխիթար։ Պէտք է շտապել իրագործելու աւանների կառուցման խոստումը, իսկ մինչև այդ աւելացնել բանւորութեան ստացած բնակարանավարձի չափը և համաճարակներից խուսափելու համար կարգի բերել եղած բնակարանները։

Խիստ վիրաւոր կողմեր ունի և համագումարի բժշկական գործը։

Հիւանդանոցներում անտեղի տնտեսութիւն է տիրում դեղերի և այլ բժշկական նիւթերի նկատմամբ։ Յաճախ բանւորները ստիպված են լինում անհրաժեշտ դեղերը ձեռք բերել մասնաւոր դեղատներից։ Ուրեմն պէտք է համագումարի դեղատները ունենան պահանջված միջոցները։ «Տնտեսութիւնը մեր առողջութեան հաշւին՝ վատ տնտեսութիւն է»— աւելացնում են բանւորները։ Ապա Բալախանիում պիտի բանալ մանկական հիւանդանոց, իսկ ծովափին (Բուզովնայում կամ Պիրշաղում) հաստատել մանկական ամարային գաղութ, ուր բանւորութեան մանուկները հերթով կարող լինեն 6 շաբաթվայ հանգստութիւն ունենալ, թարմանալ և ույժ ժողովել դիմանալու հանքերի հեղձուցիչ մթնոլորտին։ Մանկական գաղութը պիտի կարողանայ պատսպարել միանուագ առնուազն 1000 շնչի։ Անհրաժեշտ է ընդարձակել Բալախանիի կանանց հիւանդանոցը, ծննդական կայան բանալ Սև-քաղաքում և ընդհանուր հիւանդանոց Բիբի-Էյբաթում։ Պէտք է խնամք տանել անգործ բանւորների առողջութեան մասին և առ հասարակ խիստ սանիտարական հսկողութիւն սահմանել հանքերում։ Անհրաժեշտ է աւելացնել ուսումնարանների թիւը, ինչպէս և բովանդակալից դարձնել նրանց դասընթացքը։ . . . .

. . . .

Այս կարիքները, վերջացնում են բանւորները, պահանջում են անյապաղ պատասխան։ . . . .

. . . .

Դժուար է ասել, թէ ի՛նչ պատասխան կը տան նաւթարդիւնաբերողները։ Յամենայն դէպս՝ նրանք չեն կարող ասել, թէ իրանք իրազեկ չեն բանւորների կարիքներին։

Բագու Դ. Ա.

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

«Եղբայրական Օգնութեան» կօմիտէն Նոր-Բայազէտում բացել է մի մանկական ապաստարան փախստական որբերի համար։ Որբանոցում կան 86 որբեր 5—13 տարեկան։ Մտադրութիւն կայ նոյն տեղը բանալ մի այդպիսի որբանոց ևս։

Հայ Գիւղ. և Տնայն. Ընկ. լիազոր Յարութիւնեանը հեռագրում է Նոր-Բայազէտից, որ փախստականների դրութիւնը Ներքին Ախտայում շատ վատ է, որովհետև պարէնի հայթայթման գործը չափազանց անկանոն է։

Կ. Վ. ԲՈՒԿԱՎԻՇՆԻԿՕՎ

Անցած նոյեմբերի 29-ին Մոսկվայում վախճանվեց Ռուսաստանում շատ յայտնի հասարակական գործիչ և Մոսկվայի նախկին քաղաքագլուխ Կ. Վ. Բուկավիշնիկովը։

Հանգուցեալը 20 տարի առաջ Մոսկվայում բռնում էր մի կենտրոնական դէմք, որ իր շուրջն էր խմբել ժամանակի լաւագոյն հասարակական գործիչներին։

Մոսկվա քաղաքի առաջադիմութեան և զարգացման գործում Բուկավիշնիկովը կատարել է մեծ և խոշոր դեր։ Մոսկվայի ներկայ քաղաքակիրթ տեսքը շատ բանով պարտական է նրան։

Նա առաջին մարդն էր, որ ծրագրեց և ջրանցք ու կանալիզացիա անցկացրեց Մոսկվայում։ Նրա օրով հիմք դրվեցին քաղաքային թաղական աղքատախնամ հոգաբարձութիւնների, որ այնքան գործ են կատարում խեղճերին խնամելու համար։ Իր անփոյթ նախորդներից յետոյ նա կանոնաւորեց քաղաքային բոլոր գործերը և կարգապահութիւն մտցրեց ամեն բանի մէջ։ Եւ նրա օրով բարելաւվեց թէ քաղաքի ընդհանուր տեսքը և թէ քաղաքային տնտեսութեան գործը։

Նրա անունը սերտօրէն կապված է Մոսկվայի Բուկավիշնիկովեան ապաստարանի հետ, որը հիմնել էր նրա աւագ եղբայրը մանկահասակ յանցաւորների համար, և որը եղբօր մահից յետոյ կառավարում էր նա։ Ապաստարանի ծառայողների ապագայի մասին մտահոգելով, նա հիմնեց նրանց համար թոշակառու գանձարկղ և իր միջոցներից 400,000 ր. յատկացրեց ապաստարանին։

Կ. Վ. Բուկավիշնիկովը յայտնի է և Ռուսաստանի սահմաններից դուրս, որովհետև նա մասնակցել է միջազգային զանազան կօնգրէսների, որպէս Ռուսաստանի ներկայացուցիչ։

Մոսկվայի դուման միաձայն որոշել է հանգուցեալի պատկերը կախել դումայի դահլիճում «նրա ազնիւ գործունէութեան յիշողութիւնը պահելու և նրա դիմագծերը յետնորդ սերունդներին յանձնելու համար»։

ԶԻՆՒՈՐՆԵՐԻ ՀՈՂԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ

Մարդկային ցեղի ամբողջ պատմութեան ընթացքում ոչ մի պատերազմ չէ թողել այնքան հաշմանդամներ և որբեր, որքան թողնելու է իրանից յետոյ այժմեան համաեւրոպական ժողովուրդների պայքարը։ Ներկայ՝ իր զոհերի քանակով անհաւլի՝ պատերազմի իւրաքանչիւր օրը եւրոպական կօալիցիայի յաղթութիւնը՝ աւստրո-գերմանո-թիւրքական դաշնակցութեան դէմ դառնում է աւելի պարզորոշ և անխուսափելի, բայց այդ յաղթութիւնը գնվելու է ճշմարտապէս զարհուրելի գնով։ Յանուն Եւրոպայի ազատութեան և կուլտուրայի մղվող պայքարում ընդդէմ տեւտոնական նուաճումների՝ ամենածանր բաժին է ընկել Ռուսաստանին։ Նա իր կրծքի վրա ընդունեց ահեղ թշնամու ամենազօրեղ և խստագոյն հարուածները, ետ է մղում նրա գլխաւոր, ընտիր ույժերի գրոհը։

Ողջ Եւրոպայի բաղդը վճռվում է Դվինսկի, Մօլոդեչնայի և Տարնոպոլի դաշտերում։ Այստեղ աւստրո-գերմանական զօրաբանակը, կանգնեցված Ռուսաստանի վրա գործած արշաւանքում, վերջին կատաղի յարձակումների միջոցին կորցնում է իր գնդերը, թաղում է իր զօրասիւնը։ Այդ բանակի յաղթական վանումը հեռու չէ և այս անգամ անխուսափելի յաղթութիւնը մեզ կարժենայ արեան ծով։

Ձեռքի տակ ունենալով այդքան պատերազմի զոհեր, հասել է ժամը մտածելու նրանց ապահովութեան մասին։ Պետութիւնը պարտաւոր է պահպանել սովամահութիւնից ընտանիքները այն հայրերի, որոնք իրանց կեանքն են տուել նրա պաշտպանութեան համար, մխիթարել և պատսպարել հաշմանդամ եղած վետերաններին, որոնք հայրենիքի համար մղվող կռւում կորցրել են աշխատանքի ընդունակութիւնը։

Օգնութեան սովորական եղանակները, որպէս են գոյութիւն ունեցող ինվալիդների տները, բարեգործական ընկերութիւնները և մասնաւոր խնամակալութիւնները, պարզապէս չեն համապատասխանում թշւառութեան չափերին։ Օգնութիւնը պէտք է լինի նոյնքան մեծածաւալ, ինչպէս նրա կարիքը զգացող համաշխարհային պատերազմի զոհերի քանակն է։

Մասնաւոր բարեգործութիւնը մի սուրբ և բարձր բան է, բայց նա միայն մի կաթիլ է ծովում։ Ռազմի դաշտում տուժած ռազմիկների և նրանց ընտանիքների ապահովութիւնը պէտք է դրված լինի ոչ թէ որպէս խղճահարութեան և կարեկցութեան մի տուրք, այլ որպէս ազգի և պետութեան սրբազան պարտք՝ հանդէպ հայրենիքի պաշտպանների։

Ահա հէնց այդպիսի բարձրութեան վրա է դնում հարցը հողաշինութեան և երկրագործութեան գլխաւոր վարչութիւնը։ 1916 թ. բիւջէտային նախագծում առաջին կարգն է դասվում պատերազմից տուժածների հողային ապահովութիւնը՝ անկախ զինւորական համեստ կենսաթոշակներից, որոնք տրվում են վիրաւոր զինւորներին գործող օրէնքով, նախագծելով բաժանել նրանց կէսը արքունական հողերի, որոնք նախօրոք նախատեսված էին ծախվելու ռուս գաղթականներին, որպէս ազատ հողաբաժիններ (նադել) պատերազմի վետերաններին և այդ եղանակով էլ վարվել վերացված գերմանական գաղութների հողերի հետ։ Նրանք, որոնք իրանց կրծքով պաշտպանել են ռուսական երկիրը գերմանական բռնագրաւումից, այդպիսով իսկ վաստակել են իրաւունք՝ ձեռք բերել այդ երկրում իրանց համար մի լաւ անկիւն, ժառանգելով թշնամու խաղաղ ասպատակութիւնները՝ յանձինս գերմանական կօլօնիստների, որոնք ներկայ պատերազմի միջոցին այնպիսի դաւաճանական դեր կատարեցին՝ դիւրահաւատօրէն իրանց պատսպարող նոր հայրենիքի վերաբերմամբ։

Բովանդակ Ռուսաստանը միայն ջերմագին ողջունել կարող է այս խորապէս արդարացի միջոցի կիրառումը։ Մեր զինւորները կը ստանան լրացուցիչ հողաբաժիններ ոչ ձրիաբար։ Նրանք գնել են այն իրանց արիւնով՝ հեղված հայրենիքի համար։ Գերմանական կօլօնիստներից գրաւված կալուածքների և պետական ազատ հողաբաժինների վրա պատերազմի վետերանների տեղաւորութեամբ Ռուսաստանը միայն իր պարտքն է վճարում իր պաշտպաններին։

Դժուար թէ գտնվի հայրենասիրական խանդավառութեան աւելի նպաստող մի այլ միջոց։ Չը պէտք է մոռանալ, որ մեր զինւորները իրանց կազմի երեք քառորդով կազմակերպված են հողագործներից, որոնց համար հողը կազմում է նրանց կեանքի, աշխատանքի և բարեկեցութեան հիմքը։

Ռուսական բազմամիլիօն գիւղացիութեան քաղաքացիական կեանքը կը վերաշինվի հողային հարցի այդպիսի արդարացի և խելացի լուծումով։ Եթէ գերմանական կօլօնիստներին առատօրէն իւրաքանչիւր շնչին 60 դեսեատին հողաբաժնով հաստատելը և ռուսական գիւղացիութեան սակաւահողութեան միջոցին մասնաւոր կալուածատէրերի ծախու հողաբաժինների գնման անարգել թոյլատրելը հանդիսացան որպէս մեր հողային քաղաքականութեան մի տխուր սխալ, ապա այդ սխալի թէկուզ փոքր, մասնակի ուղղումը պատերազմի բերմունքով՝ անվերջ կերպով կամրապնդի ժողովրդի վստահութիւնը դէպի իշխանութիւնը։

Ընդարձակօրէն և հանդիսաւորապէս հրապարակված՝ պետական խղճի այս ակտը աւելի ևս կը բարձրացնի Եւրոպան ազատեցնող զինւոր-աշխարհների ոգին, կը ստիպի նրանց աւելի մօտիկից և պարզօրէն զգալ ազգային մեծ պատերազմի խորհրդաւոր ներքին իմաստը։ Առաջնորդվելով օտարացեղ բռնագրաւումից «ռուսական հողատիրութեան ազատագրման» դրօշի տակ, որի մասին խօսում է հողաշինութեան և երկրագործութեան գլխաւոր վարչութիւնը, ռուսական բանակը առաջ կընթանայ ժողովրդական խանդավառութեան բարձրացման հետ և արագացրած տեմպով կը հասցնէ մինչև դաժան թշնամու վտարումը։

(«Нива») Թարգմ. Մենտոր-Միրաժ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նորութիւններ գիւղից

Ծուղրուտ, 10 դեկտ.

Ծուղրուտը գտնվում է Ախալցխայի հիւսիս-արևմտեան կողմում քաղաքից 4 վերստ հեռաւորութեան վրա։ Գիւղը բաղկացած է 132 տնից մօտ 850 բնակչով, որոնց գլխաւոր պարապմունքն է երկրագործութիւնը և քարտաշութիւնը։ Գիւղը թէև ունի բաւականաչափ ընդարձակ վարելահողեր, բայց հողը ունենալով կրային և կաւային բաղադրութիւն և լինելով անջրդի, շատ անբերրի է, և լինում են տարիներ, երբ գիւղացիք ցանած սերմերն էլ չեն ստանում, որի համար Ծուղրուտի բաղդը կապված է երկնքի հետ։ Գիւղի մէջ կայ միմիայն մի աղբիւր, իսկ գիւղի արևմտեան ձորով հոսում է մի փոքրիկ և մշտապէս պղտոր վտակ, որոնք բաւարար կերպով չեն կարող ջուր մատակարարել փոքր տարածութեան վրա գտնված այգիներին։ Արօտատեղեր համարեա չունի, եղածն էլ անպէտք, որի համար չեն պահում բաւարար թւով կաթնատու կենդանիներ, և որի պատճառով բոլոր գիւղացիք իւղ ու պանիրը քաղաքից են գնում։ Գիւղացոց գլխաւոր եկամուտի աղբիւրներից մէկը համարվում էր՝ գիւղի մօտ գտնված յայտնի քարահանքը, որից մեծ չափով քար էին արտահանում Ախալցխա, բայց ներկայ պատերազմի պատճառով բոլորովին կանգ է առել, որից գիւղացիք մեծապէս տուժում են։

Գիւղում մուտք են գործել նոր երկաթէ գութաններ և հին ու փայտէ ծանր գութանները չքացել են շնորհիւ նախկին ուսուցիչների ջանքերի։

Գիւղը ունի ծխական միդասեան երկսեռ դպրոց երկու ուսուցչով, դպրոցը պահվում է աշակերտների թոշակներով և Կ. Հ. Բ.

II

Դեկտ. 14-ին լրանում է Սողոմոն Եղիազարեանի պրոֆեսորութեան 30-ամեայ յոբելեանը։ Ահա լրանալու վրա է 43 տարին այն օրից, երբ Ս. Եղիազարեանը առաջին անգամ երեւացել է «Մշակում»։ 39 տարի սրանից առաջ իր առաջին քննական-պատմական աշխատութիւնը (Краткій экономическій очеркъ курдовъ Эриванской губерніи) նա ներկայացրել է Ռուսաց Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան Կովկասի բաժանմունքին։ Վերականգնելով յիշողութեանս մէջ յարգելի գիտնականի երկար գործունէութիւնը, ես ակամայ մի քիչ խորասուզվեցի հայկական իրականութեան ցաւերից մի քանիսի մէջ, որոնց դէմ մաքառել է և չի էլ դադարում մաքառել մեր հասարակութեան լաւ անդամներից մէկը։

Դաւալու գիւղում ծնած (1852 թ.), ժողովրդի մէջ մեծացած՝ նա մանուկ հասակից ուխտել էր հալալ զաւակ լինել իր հայրենիքի համար։ Աւարտելով ուսումը նախ՝ Երևանի նահանգական դպրոցում, որ վերափոխվել էր պրօգիմնազիայի, ապա՝ Թիֆլիսի առաջին գիմնազիան (1876 թ.), նա անցնում է Մոսկվայի համալսարանը։ Այստեղ նա աւարտում է իրաւաբանական մասը 1880 թ., որից յետոյ մի երկու տարի պատրաստվում է պրոֆեսորութեան կոչմանը՝ Մոսկվայում պրոֆ. Մակ. Կովալևսկիի, իսկ Դորպատում պրոֆ. Լեօնինգի (Löning) միջնորդութեամբ։

Հեռաւոր հիւսիսում գիտական պարապմունքների մէջ խրված՝ նա չէր մոռացել, որ հայրենիքը կարօտ է լուսաւոր գործիչների։ Նա վերադառնում է Թիֆլիս և ընտրվում Ներսիսեան դպրոցի տեսուչ (1883 թ)։ Սակայն այստեղ նա դիմանում է միմիայն մի տարի։ Ծանրացած հայկական կեանքի խեղդող մթնոլորտից՝ նա հրաժարվում է տեսչութիւնից և՝ Կազան քաղաքն անցնելով՝ տալիս է մագիստրոսի քննութիւնն ու ստանձնում պրոֆեսորութեան պաշտօն։ 1893 թւից նա տեղափոխվում է Կիևի համալսարանը, որտեղ շարունակում է դասախօսել այժմ էլ։

Ս. Եղիազարեանը առաջինը չէր, որ՝ երիտասարդական մաքուր ու վսեմ տենչերով տոգորված՝ հայրենիք էր մտնում, նրան ծառայելու նպատակով, և հէնց երկրորդ քայլափոխին հանդիպում էր խոչընդոտների, որոնց զոհ են գնացել շատերը մեր երիտասարդ գործիչներից։

Յիշենք Աբովեանին։ Հայրենասիրական գաղափարը սրտին՝ նա Դորպատից վազեվազ հայրենիք էր շտապել ազգին նուիրվելու։ Ինչպէս ընդունեց իր ազնիւ զաւակին հայ հասարակութիւնը, դա յայտնի է ամենքին ու կրկնելն էլ աւելորդ... Եւ ողբալով իր անդրանիկ վիպասանի մահը — մի մահ, որի բոլոր պատճառները ծանրանում են Աբովեանին ժամանակակից հասարակութեան վրա — կարծում էք, թէ խրատվեց հայը։

Յիշենք մի ուրիշ դէպք։ Երբ որ 1884 թ. Գր. Արծրունու նիւթական դրութիւնը վատթարացել էր, երբ Գրիգոր և Անդրէաս եղբայրների 3-յարկանի գալերէան և երկյարկանի տունը պէտք է աճուրդով վաճառվէր, մի մարդ ճարվե՞ց, որ «Մշակի» խմբագրին օգնութեան ձեռք մեկնելով՝ փոխադարձաբար հասցնէր որոշ գումար՝ «Մշակի» հրատարակութիւնը նիւթական կրախից ազատելու։ Այդ ժամանակ «Մշակը» երկու ամսով դադարել էր։ Նրա աշխատակիցներից 2 հոգի — Հ. Առաքելեանը և Ա. Ազբեխեանը — դիմեցին հայ հասարակութեանը՝ «Ո՞ւր է հայի ինքնաճանաչութիւնը» բրօշիւրով։

«Ինքնաճանաչ է այն ազգը, — ասված էր բրօշիւրի մէջ, — որ գիտէ գնահատել իր գործիչներին, որ գիտէ պահպանել այն հաստատութեանց գոյութիւնը, որոնց մասին նա համակրական արտայայտութիւններ է արձակում, որ գիտէ քաջալերել և խրախուսել այն անձանց, որոնք իրանց միտքը, գրիչը, փողը նուիրում են յօգուտ այդ ազգի, և որն, ընդհակառակը, գիտէ որոշել իր վնասողներին, իր առաջադիմութեան ընթացքը խանգարողներին։ Սակայն այդ գնահատութիւնը, համակրութիւնը ինչո՞վ պիտի լինի, լոկ խօսքով թէ գործով։ Եթէ գործով, ապա ունեցած ներկայումս մի խիստ յարմար առիթ է ներկայանում»...

Ակամայ արձանագրում եմ մի դէպք էլ։ Ստրասբուրգի համալսարանը աւարտած Ալ. Արասխանեանը չի ընդունում պրոֆ. Շոլլէրի առաջարկը շարունակել պարապմունքները նոյն համալսարանում կաֆեդրա ըստանձնելու, շտապում է հայրենիք և կարճ ժամանակից՝ ստանում է Ներսիսեան դպրոցում ուսուցչի պաշտօն։ Բայց նա էլ չի դիմանում դպրոցի մթնոլորտին... Նա ձեռնարկում է «Մուրճի» հրատարակութեանը։ Գուցէ իբրև խմբագիր՝ Արասխանեանը իր տեղումը չէր — այդ ուրիշ հարց է — սակայն չի կարելի ուրանալ այն ծառայութիւնը, որ «Մուրճն» արել է հայ գրականութեանը։ Ուրեմն ինչով բացատրենք, որ ամբողջ ռուսահայութիւնը չը կարողացաւ և կամ չուզեց ապահովել մեր միակ ամսագիրը։ Եւ ինչպէս է կնքում իր կեանքի օրերը Ստրասբուրգի համալսարանից պետական գիտութիւնների դօկտորի աստիճանին արժանացած և ամբողջ տասնամեակ հայ ամսագրի ծանր գործերը տանող Ալ. Արասխանեանը...

1907-րդ թէ 1908-րդ թւականին, լաւ չեմ յիշում, Բագուի նաւթարդիւնաբերական գրասենեակներում նա գործ էր փնտռում, իսկ յետոյ... վախճանվում է Ախալքալաքի ստորին ուսումնարանի հասարակ ուսուցչի պաշտօնը վարելիս... Մինչդեռ միմիայն հայկական իրականութիւնը կարող է տալ այդ տեսակ տրագիքական երևոյթներ...

Ս. Եղիազարեանը չը գնաց հայ գործչի տատասկոտ ճանապարհով։ Նա եկել էր գործելու, իսկ նրան առաջարկում էին ծառայել... Служить бы радъ, прислуживаться тошно, — մտածեց նա Չացկու խօսքերով, և ետ դարձաւ ընդհատած գիտնական աշխատանքներին։ Երբ նրանից հարցնում էին թէ ինչո՞ւ է թողնում տեսչութիւնը, նա ցաւով պատասխանում էր՝

— Ես հային կը ծառայեմ այն ժամանակ, երբ որ թոշակով ապահովացնեն ինձ, որ պատի տակ քաղցած չը մնամ։

Բայց՝ հեռու հայրենիքից՝ Վոլգա գետի ափին և կամ Կիևում ապրելով, նա երբեք չի դաւաճանել իր հայ անունին։ Ռուսաստանի խորքերում, արտասահմանի քաղաքներում հայ ուսանող, հայ վաճառական, հայ ինտելիգենտ պատահելիս՝ նա միշտ քաշվել է այլազգի բարբառով խօսելուց։ Մայրենի լեզուն չիմացող, մայրենի լեզուն մոռացող հայը, նրա ասելով, նրա համոզմունքով, ոչ այլ ինչ է, բայց եթէ անասնացած հայ։ Նրա բնակարանը մտնելիս դուք ուղղակի զարմանում էք այդ լուրջ գիտնականի սիրոյն դէպի ազգակիցների կեանքը և գրական խօսքը։ Նրա գրասեղանի վրա դուք միշտ կը պատահէք հայ լրագրութեան և թերթերի գրեթէ բոլոր ներկայացուցիչներին։ Նա ոչ միայն ինքն է կարդում, այլ կարդալ է առաջարկում ուսանողներին և հայ ծանօթներին։

Նրա բոլոր գիտնական աշխատութիւնները ռուսերէն լեզուով նուիրված են հայրենիքի ուսումնասիրութեանը*)։ Հայերէն լեզուով նա գրել է մի շարք յօդուածներ զանազան թերթերում։ «Մշակին» սկսել է աշխատակցել 1872 թ.-ից։ Իր առաջին գրուածքները՝ — գիւղական կեանքից վերցված վէպիկներ և պատմութիւններ («Հարսանիք», «Ալ չի Ալօն», «Կիրակնամուտի զոհը» և այլն) - տպել է Ս. Ե. ստորագրութեամբ։ Յիշատակում եմ նրա յօդուածներից մի քանիսը. «Ժողովրդական գրականութեան էտնօլօգիական նշանակութիւնը» («Մշակ», 1881 թ.), «Փեօդալական հողատիրութիւնը հայոց նահանգներում» id., 1882 թ.), «Միջնադարեան համքարութիւնը և միջնադարեան ցեխերը» (id., 1891 թ.), «Համլէթի գերեզմանի մօտ» («Տարազ», 1912 թ.), Շվեյցարիայի ազատութեան օրօրոցը» (id., 1913 թ.)։ Ուշադրութեան արժանի է Աբդուլ-Րզակ Բեդրխանին ուղղած նրա նամակը, որ լոյս է տեսել «Մշակի» այս տարվայ 252-դ համարում։

Այստեղ նա առաջարկում է քիւրդ ցեղապետին խմբվել հայերի հետ խորհրդակցելու, մեր և քիւրդերի միջև առաջ եկած թիւրիմացութիւնները պարզելու և եղբայրաբար հաշտվելու։ Միևնոյն եղբայրական զգացմունքներից է գրած նրա մի ուրիշ յօդուածը, որ նա տպել է՝ մօտաւորապէս 15 տարի սրանից առաջ՝ «Մի համեստ նուէր հասկացող վրացիների և հայերի ինտելիգենտ դասակարգին» վերնագրով։ Այդ յօդուածի գլխին նա դրել է ժողովրդական էպիգրաֆը՝ «Ուռի ծառի որդը, որ իր միջից չը լինէր, նա հազար տարի կապրէր...»։

Նա աշխատակցել է «Кіевлянинъ» թերթին, որտեղ 1910 թ. զետեղելով մի մեծ աշխատութիւն Մօտ Արևելքի շարժման և Ռուսաստանի կրիտիքական դրութեան մասին ապագայ պատերազմի ժամանակ՝ նախագուշակել է ներկայ համաեւրոպական ահեղ պատերազմը։ Այդ լրագրում տպված գրուածքները ստորագրել է Раффи-Селимъ կեղծանունով։

Ես վերջացնում եմ այսօրվայ խօսքս, որն առանց այն էլ երկարացրի։

Ս. Եղիազարեանը, ինչպէս և ուրիշ հայ երիտասարդներ, եկել էր ջրելու այն ընդհանրացած կարծիքը, թէ հայ համալսարանաւարտը օտարանում է իր մայրենի հողից և հայրենիքի համար դառնում է մի տեսակ «Նոյի ագռաւ»։ Նա այդ կատարեց միմիայն մասամբ։ Չը դիմանալով հայկական մթնոլորտին՝ նա շատ շուտ հեռացաւ հայրենիքում գործելու ասպարէզից։ Բայց իր յետագայ կեանքով նա ապացուցեց, թէ հայը միշտ կարող է և պէտք է հայ մնայ, ինչ ասպարէզում էլ նա կոչված լինի աշխատելու։ Եղիազարեանի ձիգ տարիների պրոֆեսորութեան պաշտօնը այսօր նրան պիտի վարձատրէ պետական թոշակով։ Ցանկանում եմ գիտնականին երկար կեանք և նոր գործունէութիւն՝ ազգային անդաստանի վրա... Չէ որ նա հասել է իր մուրազին և էլ չի կարող պատի տակ քաղցած մնալ...

Յովհաննէս Գնունի

---

*) 1) Краткій экономическій очеркъ курдовъ Эриванской губерніи; 2) Этнографическо-юридическій бытъ іезидовъ Эриванск. губ; 3) О сектахъ субботовъ; 4) Изслѣдованія по исторіи учрежденій въ Закавказьѣ, I ч. Сельская община, II ч. Городскіе цехи; 5) Административный и экономическій строй сельской общины въ Эриванск. губ.; 6) Правовое устройство крестьянской семьи; 7) Общинное землевладѣніе въ Елисаветпольской и Бакинск. губ.; 8) Формы землевладѣнія въ Кутаисск. и Тифлисск. губ.; 9) Возникновеніе спорныхъ земель; 10) Водовладѣніе.

Ընկերութեան տարեկան 200 ռ. նպաստով։ Գիւղը մօտ լինելով քաղաքին՝ Բարեգ. Ընկերութեան Ախալցխայի ճիւղի քարտուղար-անդամ Խ. Թլխմիչչեանը մշտապէս յարաբերութիւն ունենալով թէ ուսուցիչների և թէ հոգաբարձուների հետ մեծապէս օգնում է դպրոցական գործին իր ձեռնհասութեամբ և խորհուրդներով։ Այս տարի աշ.-աշակերտուհիների թիւն է 80, որոնք տեղաւորված են երկու բաժանմունքներում. և եթէ դպրոցական շէնքը ունենայ աւելի յարմարութիւն, դպրոց կը յաճախեն մշտապէս 100-ից աւելի աշակ.-աշակերտուհիներ։

Մեծ կարիք է զգացվում դպրոցը երկդասեան դարձնելու և մի ձեռագործի բաժանմունք բանալու դպրոցաւարտ աղջիկների համար, որոնց թիւը քիչ չէ. բայց գիւղացոց տնտեսական դրութիւնը արգելք է հանդիսանում։ Գիւղացոց չքաւորութեան պատճառներից գլխաւորն է այն, որ ամեն մի ընտանիքի զաւակ երբ չափահաս է դառնում և ամուսնանում է, առաջին գործն է լինում ծնողներից բաժանվելը, որը գիւղացուն ձեռնտու չէ և տնտեսապէս քայքայում է։

Ուսուցիչը զրկվեց իր բարերար բժ. Բաղդասարեանից, որը գիւղում հիմնելու էր գիւղատնտեսական դպրոց, որի համար անցեալ 1913 թ. ուղարկել էր պտղատու ծառեր։ Հանգուցեալ բժշկի առաջարկութեան համաձայն՝ գիւղացիք եկեղեցու միջոցներով ձեռք բերին մի յարմար հող՝ հիմնելիք դպրոցի շէնքի և այգու համար։ Գիւղացիք մինչև օրս էլ սպասում են և յոյս ունեն, թէ դպրոցը կը շինվի, այն ինչ՝ հանգուցեալի ժառանգները դեռ չեն յայտնել գիւղացոց թէ դպրոցը շինվելու է թէ ոչ։

Բայց ցանկալի չէր լինի, որ բժշկի մեռնելով մեռնէր և նրա կիսով չափ գլուխ բերած և երկար տարիներ սնված ու խօսված ընդհանրութեան յայտնի եղած այդ գործը։

Հովիւ

—

Դիլիջանի որբանոցները

Դիլիջան, 5 դեկտեմբերի

Դիլիջանում այժմ կան մօտաւորապէս 36 որբեր, որոնք տեղաւորվել են 6 որբանոցներում, որոնցից մեծ տոկոսը կազմում են աղջիկները։ Որբանոցները գտնվում են Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդի վերին հսկողութեան ներքոյ, իսկ մերձաւոր հսկողութիւնը առակում է կենտր. Կոմիտէի կողմից ազօրված անդամներին և Ընկերութեան Դիլիջանի ճիւղի վարչութեան։ Որբանոցների ներքին վարչական, տնտեսական, նիւթական, ֆիզիքական և կրթական հսկողութիւնը յանձնված է կառավարչուհիների, որոնք ունեն իրանց ծառայողները, օգնականները և դաստիարակչուհիները։ Վերջինները իրավին անհամապատասխան են իրանց պաշտօնին և բարձր կոչման, որով և կաղում է որբանոցներում կրթական և դաստիարակչական գործը։ Ցանկալի է, որ վարչութիւնը ուշադրութիւն դարձնի այս կէտի վրա։ Ուսուցչ. կազմը ևս չի կարող կատարել իր պաշտօնն արդիւնաւէտ կերպով. օրական 3 ժամ (պարապմունքները տևում են ժ. 2—5-ը) աշխատելով անհնար է տալ որբերին մտաւոր և ֆիզիքական (որը բացակայում է որբանոցներում) զարգացում, նաև առաջ տանել դաստիարակչական դժուարին գործը։

Որբանոցները ներկայացնում են որպէս միանգամ ընտանիք։ Ինչպէս իւրաքանչիւր ծնող պարտաւոր է կրթել, դաստիարակել իր զաւակին, նոյնը պահանջվում է որբանոցներից։ Դաստիարակչական գործը որբանոցներում վարվում է տեղիս ծխ. դպրոցի IV և V բաժանմունքն աւարտածների միջոցով։

Իւրաքանչիւր որբանոց ունի իր հիւանդանոցը, որտեղ բժշկվում են միայն ոչ-վարակիչ հիւանդութիւններ, իսկ վարակիչ հիւանդութեան դէպքում հիւանդներին անմիջապէս տեղափոխում են Քաղաքների Միութեան գաղթականների հիւանդանոցը։ Որբերի մէջ շատ տարածված է բոր հիւանդութիւնը։ Զարմանալի է, որ այս բանը անուշադրութեան է մատնվել որբանոցի կառավարչուհիների կողմից։ Բորոտները միւս որբերի հետ միասին ճաշում, քնում են. անգամ չեն առանձնացվել բաժակները։ Որբերի համար բացվել է դպրոց, որի րութեան և դասատուների անյարմարութեան պատճառով՝ դպրոց յաճախողների թիւը եղել 636-ից 240 հոգի նախկին որբերից՝ 6 ուսուցիչներով։ Որպէսզի Հայաստանի թշուառ, տառապանքի ու զրկանքի ենթարկված զաւակները չը զրկվեն հասարակ գրագիտութիւնից, Կ. Հ. Բ. տեղիս ճիւղի վարչութիւնը որոշել է րոցին կից վարձել մի շինութիւն, պատրաստել տալ դպրոցական պիտոյքներ և աւելացնել ուսուցիչների թիւը։ Բայց ցաւալի է, որ այդ որոշումը դեռ մնացել է անիրագործելի։ Այստեղ հաստատված է նաև խնամակալութեան և հիւանդութեան արհեստանոց, բայց հասակաւոր համար։ Բացվելու է նաև կար ու ձևի աղջիկների համար։

Այստեղ հաց շատ դժուարութեամբ է ձեռք բերվում, եղածն էլ ամենավատ տեսակի, ֆունտը ծախվում է 6—7 կ., իսկ լաւը ները շատ լաւ չեն. մինչև այժմ է միայն մի անգամ, այն էլ շատ

Մարօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Ուրբաթ, դեկտեմբերի 11-ին, Տ. Նազարեանի Գրական-Գեղարվեստական Սալօնի հերթական նիստում, որ կայացաւ Հ. Առաքելեանի նախագահութեամբ, վերջինս ողջունեց մի քանի համակրական խօսքերով Ամերիկայից եկած հայ սանիտարական-բժշկական խմբի անդամներին, որոնք և պատասխանեցին ամեն մինը առանձին ճառով։ Այդ ճառերը լսվեցին լարված ուշադրութեամբ և շատ ծափահարվեցին։ Ի վերջոյ նախագահը մաղթեց նրանց արդիւնաւէտ գործունէութիւն՝ իրանց ընդգծած նոր ասպարէզում։ Մանրամասն նկարագրութիւնը կը տանք յաջորդ անգամ։

◆ Մենք ստացանք Բագւում, առանձին խմբագրական մարմնի՝ Ս. Արարատեանի, Դ. Անանունի, Ա. Գիւլ-Խանդանեանի, Մարի և Ս. Ցակոբեանի՝ ձեռքով հրատարակված «Նուէր Որբերին» թերթը, որի վաճառքից գոյացած զուտ արդիւնքը յատկացվելու հայ որբերի օգտին։ Թերթում տպագրված է բանաստեղծ Յովհ. Յովհաննիսեանի մի յօդուածը «Մեզ չեն ճանաչում» վերնագրով, որտեղ նա խօսում է օտար ազգերի մեզ չը ճանաչելու մասին և ռուս գրողների (Գորկիյ, Բրիւսով և այլոց) վերջին ձեռնարկութեան վրա, որ արվել է հայ գրականութեան վերաբերմամբ։ Յովհաննիսեանը գտնում է, որ «այդ ձեռնարկութիւնը «մի ազնիւ և մեծակշիռ ծառայութիւն է հայ ազգի դատին», և այդ ուղղութեամբ աշխատանքը մեր ազգային կարևորագոյն խնդիրներից մէկը պիտի դառնայ»։ Թերթում բանաստեղծութիւններ ունեն Յովհ. Կոստանեան, Վահան Տէրեան. յօդուածներ՝ Լևոն Աթաբէկեան, Ար. Առաքելեան. Դ. Անանուն, Զէյ Դաղեստանի, Վ. Ի. Ֆրոլով, Քր. Վերմիշեան, Պ. Կարա-Մուրզա և ուրիշները։

◆ Սանիտարական և զինուորների տեղափոխութեան մասին Գերագոյն Պետի կարգադրութեամբ Թիֆլիս եկած պրիվատ-դոցենտ Շիրօկօգորով այցելելով Նաւթլուղի դասաւորող հիւանդանոցը, հետևեալն է գրել այցելուների գրքում. «Դիտելով դասաւորող հիւանդանոցը, դեկտեմբերի 9-ին 1915 թ., այս կայանի ամբողջ կազմակերպութիւնը սքանչելի տպաւորութիւն է թողնում. կարգը և մաքրութիւնը ուղղակի օրինակելի է»։

◆ Մենք ստացանք Եգիպտոսում հրատարակվող «Արև» թերթի նոյեմբերի համարներից, որոնց մէջ «Մշակից» արտատպված է մեր աշխատակից Բ. Իշխանեանի «Աղէտի և տառապանքի աշխարհից» ընդարձակ յօդուածը։

◆ Դեկտեմբերի 10-ին տեղի ունեցաւ Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազի օգնական Նա. Վ. Ֆասսի թաղումը Կուկիայի գերեզմանատանը։

◆ Դեկտեմբերի 14-ին, երկուշաբթի օրը, քաղ. վարչութիւնը դումային է ներկայացնելու քաղաքի 1916 թ. ելքի և մուտքի նախահաշիւը՝ հաստատելու համար։

◆ Պարենաւորման գործի լիազօր Շաշկօվսկին նորից դիմել է զինուորական հաղորդակցութիւնների կառավարչին՝ վագոններ տալու շաքարի համար։

◆ Դեկտեմբերի 10-ին տեղի ունեցաւ Արքունական թատրոնի «կապելլիստների օրը» զինուորների համար ընծաներ գնելու։ Կապելլիստների փոխարէն շոր-կախարանների մօտ սպասաւորում էին կանայք, իսկ առաջիններն օգնում էին նրանց՝ շորեր կախելու։ Այդ կանայք իրանց ձեռքին ունէին հանգանակութեան տուփեր, որոնց մէջ և ձգվում էր նուիրաբերութիւնը, որից վերջում գոյացաւ 387 ռ., որով պէտք է մի յատուկ կապոց ընծաներ գնվի և ուղարկվի զինուորներին։

◆ Առաջիկայ շաբաթ օրը Հասարակական ակումբում (Անաստասեևսկայա փ., № 22) կը կայանայ մի երեկոյթ՝ նուիրված նորերս Կալիֆօրնիայում վախճանված Ա. Բ. Նուանդալեանի յիշատակին։ Հանգուցեալի բարեկամները և ընկերները յիշողութիւններ են պատմելու նրա մասին։ Վերջում կը կատարվեն երեկոյթի ոգուն համապատասխան մի քանի երգեր։

◆ Այսօր Ժողովրդական Տանը, ցերեկվայ ժամը 12-ին, կը կայանայ ժողովրդական համալսարանների ընկ. անդամների ընդհանուր ժողովը։

◆ Գիւղատնտեսական Ընկ. հրահանգիչ Ցարութիւնեան այս ձմեռվայ ընթացքում շրջելու և գիւղատնտեսական զրոյցներ է կարդալու Լօռու, Փամբակի և Աբարանի շրջանների հայ գիւղերում։

◆ Դեկտեմբերի 11-ին Թիֆլիսում ըստացվեցին հետևեալ մթերքները. ալիւր 17 վագօն, շաքար 1 վ., գետնախնձոր 1 վ., միրգ 142 պուդ, վառելափայտ 11 վ., քարածուխ 1 վագօն։

◆ Այսօր Գրական-Գեղարվեստական Սալօնում ցեր. $1^1/_2$ ժամին լուսանկարվելու են Ամերիկայից եկած մեր հիւրերը տեղական մի խումբ գրականագէտների և հասարակական գործիչների հետ։

◆ Գէորգ Ստեփանեան, այսօր մարմինը հողին յանձնվող իր հօր՝ գնդապետ Գասպար Ցարութիւնեան Ստեփանեանի յիշատակին, նուիրել է Տ. Նազարեանի ճաշարանին 20 ռ.։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Գրօզնիում,— «Кубанск. Мысль» թերթի ասելով,— քաղաքային իրաւատուներ Տերենտեւ և Խրէնով, որոնց ակտիվ մասնակցութեամբ և ցանկութեամբ տեղական դուման որոշեց արգելել օղու վաճառքը, այս օրերս արբած դրութեամբ փողոցներում շրջելու համար երկուսն էլ Թէրէքի ընդհանուր-նահանգապետի կողմից ենթարկվել են տուգանքի՝ առաջինը 75 ռ. կամ 3 շաբաթ բանտարգելութեան, իսկ երկրորդը 50 ռ. կամ 2 շաբաթ բանտարգելութեան։

◆ Էջմիածնից մեզ գրում են. «Երէկ տեղի ունեցաւ ճեմարանի հիւանդների փոխադրութիւնը նոր վեհարան. այս բանը մեզ առիթ է տալիս կարծելու, որ ճեմարանը յունվարին կը բացվի։ Ամսիս 9-ին ճեմարանի մատենադարանում տեղի ունեցաւ հոգեհանգիստ ճեմարանի հիմնադրի՝ Գէորգ Դ. կաթողիկոսի մահվան 33-ամեակի առիթով։ Ներկայ էին ճեմարանի ուսուցչական կազմը և տեղս եղած աշակերտութիւնը»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

◆ Վրաց Բարեգործական Ընկերութիւնը որոշել է վրացի-մուսուլմանների համար, Բաթումի շրջանում բանալ չորս դպրոց՝ գիւղատնտեսական և արդիւնաբերական, կրթական բաժանմունքներով։ Ընկ. որոշել է կանացի հիւանդանոց բանալ Բաթում քաղաքում։

◆ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկ. որոշել է Լագօդեխում բանալ մի գրադարան վրաց բանաստեղծ Վաժա-Փշաւելի անունով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

II

Բայց մահմեդականութիւնը աւելի ևս մեծ օգնութիւն ստանում է գաղութային քաղաքականութեան կողմից։ Գաղութային կառավարութիւններից ոմանք շատ ժամանակներից ի վեր մի առանձին գերադասութիւն են տուել իսլամին աւելի՝ քան թէ նոյն իսկ քրիստոնէութեանը կամ թէ միւս կրօններին և այդ արել են հարկաւ ուշադրութեան առնելով նրա զօրաւոր դերը և աջող պրօպագանդան։

Անգլիական կառավարութիւնն այս բանի մէջ միւսներից աւելի առաջ է անցել։ Մահմեդականների և հեթանոսների համար շինվում են բազմաթիւ դպրոցներ, որոնց մէջ արգելված է սովորեցնել քրիստոնէական կրօնը. և դա նշանակում է, որ այդ դպրոցները յատկացված են բացառապէս մահմեդական պրօպագանդայի համար։ Եւ եղել են դէպքեր, երբ մահմեդական ուսուցիչներին ազատ իրաւունք է տրվել դպրոցների մէջ դասաւանդելու, հէնց այն նոյն ժամանակ, երբ քրիստոնեաներին բոլորովին արգելված էր այնտեղ ներս մտնել կամ յարաբերութիւն ունենալ հասունութեան վկայական ստանալու պատրաստվող աշակերտների հետ։ Սակայն կարծես թէ հիմա մի փոփոխութիւն է մտել այս անհնարին դրութեան մէջ։ Ետոյ՝ կառավարութիւնը փող է բաց թողնում քանդված մզկիթները վերաշինելու համար, ներկայացուցիչներ է ուղարկում մահմեդական տօնախմբութիւններին, հէնց այն նոյն ժամանակ, երբ քրիստոնեաները նկատողութեան չեն առնվում։ Եգիպտոսում կառավարութեան հրամանով տօնվում է ուրբաթը, մահմեդականների աղօթքի օրը, որպէս հանգստեան օր, մինչդեռ կիրակի օրերը խանութները և գրասենեակները կարող են բաց լինել։ Եւ երբ այդ նոյն կառավարութիւնը բանի կերպով թլփատել է տալիս իր հեթանոս զինուորներին, որպէս զի գրաւէ մահմեդականներին, այո, այդպիսով նա հաճոյանալու համար այնքան է առաջ գնում՝ որ դրանից աւելին ոչ ոք չէր կարող պահանջել։

Եւ մահմեդականների կողմից եղել են երախտագիտական արտայայտութիւններ։ 1913 թւին Լագօսում բացվեց մի մզկիթ, որը նստել էր 130,000 ռ.։ Նուիրման ճառը արտասանեց կառավարութեան տեղական մահմեդական դպրոցի տեսուչը, և նա արտայայտեց հաւատարմութեան և շնորհակալութեան ամենամեծ զգացումներ դէպի անգլիական կառավարութիւնը, որ «այն ասողն է, որ տանում է մեր կրօնը դէպի ազատութեան եզերքը։ Այստեղ իսլամը ազատութեան օդ է շնչում. Նրա սերմերը տարածվում են ընդարձակ տարածութեան վրա՝ պտղաբեր հողի մէջ... Անձի և ստացուածքի այն ապահովութիւնը, որ մտցրեց անգլիական կառավարութիւնը, բերեց իր հետ մեր երկրի խաղաղութիւն, արդիւնաբերութիւնը ծաղկեց, և իսլամի հետևողները զարմանալի արագութեամբ հազարներով աւելացան»...

Այս ամենի վրա աւելացրէք և այն նշանաւոր հանգամանքը, որ գաղութային իշխանութիւններն ստիպված են գաղութների քաղաքացիական և զինուորական կառավարութիւնների մէջ շատ մեծ չափով գործածել մահմեդական ազգաբնակութիւնը։ Այն պաշտօնեաները, որոնց յանձնվել էր գաղութների գործավարութիւնը կազմակերպելու գործը, ի հարկէ միայն շատ սահմանափակ կերպով կարող էին օգնականներ ընտրել այն քիչ սպիտակամորթների մէջ, որոնք բնակութիւն էին հաստատել այդ երկրներում։ Կլիմայական պայմաններն էլ ստիպում էին շատ զգոյշ լինել այդ բանի մէջ; մանաւանդ երբ խնդիրը վերաբերում էր աւելի ծանր պաշտօններին։ Ստիպված էին գործածել բնիկներից, իսկ դրանց մէջ խելոյն աչքի էին ընկնում մահմեդականները որպէս աւելի նշանաւոր և գործածելու յարմար տարր։ Նրանք սպիտակների վրա ազդեցութիւն էին գործում իրանց ինքնավստահ դիրքով, նիւթական աւելի ապահով վիճակով և իրանց աւելի բարձր հասկացողութեամբ այն հարցերի նկատմամբ, որոնք վերաբերում էին երկրի եկամտային կարողութեանը և նոր գաղութներ հիմնելու հնարաւորութիւններին։ Եւ այդ հանգամանքների տակ համարեա թէ պարզ է, որ նրանց կամաւ առաջարկված ծառայութիւնը յօժարութեամբ ընդունվում էր, և թէև յետոյ երբեմն յայտնվում էր, որ մահմեդական պաշտօնեաներն իրանց դիրքը գործածում էին կրօնական եռանդուն պրօպագանդա մղելու համար, սակայն բարձր իշխանութիւնները դրա մէջ ոչ մի վնաս չէին տեսնում, եթէ միայն պաշտօնեաներն իրանց պաշտօնին վերաբերեալ գործերը պէտք եղածին պէս կատարում էին։ Ահա դա էր պատճառը, որ շատ մեծ թւով երկրորդական պաշտօնեաներ, ենթասպաներ և զինուորներ լինում էին մահմեդականներից, մահմեդական վաճառականների միջոցով էին կատարվում առևտրական յարաբերութիւնները բնիկ գիւղացիների հետ, ճանապարհների և երկաթուղիների շինութեան ժամանակ գործը կատարում էին սպիտակ ճարտարագէտները մահմեդական գործակատարների միջոցով [illegible]։

Այդ կերպով կառավարութեան յարաբերութիւնների մեծագոյն մասը բնիկների հետ տեղի էր ունենում մահմեդական միջնորդների միջոցով, և դրանք, ինչպէս յայտնի է, երբէք առիթը չեն փախցնում, այլ գործ են ածում նպաստաւոր հանգամանքները՝ հաւատացեալների թիւն աւելացնելու համար։

Մ. Դերձակեան

ՖԵԼԻԵՏՕՆ

ՑԱՐՕՐԻՆԱԿ ՍՆԱՓԱՌՈՒԹԻՒՆ

—

Գիտէ՞ք, ընթերցողներ, որ Թիֆլիսում մենք ունեցել ենք մի նշանաւոր դիպլոմատ, որ քաղաքական տեսակցութիւն է ունենում նոյնիսկ եւրօպական կաբինէտների պետերի հետ։

Անշուշտ, չը գիտէք։

Ուստի իմացէք։ Կարդացէք Թիֆլիսի մշուշապատ թերթի հետևեալ սֆինքսային լուրը.

«... Մեր թերթի խմբագիրն ևս առիթ է ունեցել տեսնվելու Սօֆիայում դեսպան Սավինսկիի հետ ներկայ տարվայ փետրվարի 16-ին, և ստացել է նրանից ամենակտրուկ և ամենաւստահ յայտարարութիւն, որ բերում ենք բառացի.

«Դուք ձգեցէք ձեր գլխից այդ անհեթեթ միտքը. Թող հանգիստ մնան ձեր թիւրքահայ հայրենակիցները. Բօլգարիան երբէք չի միանայ թիւրքերին ու գերմաններին...»։

Որքան յիշում ենք, այս տարվայ փետրվարի 16-ին և այժմ ևս այդ թերթի խմբագիրն է խեղճ և համեստ Ս. Սահակեանը, որ իր կեանքում Սօֆիայի երեսը չէ տեսել, իսկ հրատարակիչն է Բզօմայի համալսարանի սանը։ Արդեօք սա է տեսակցել։

Ինչ և լինի, որպիսի մեծ համբաւ։

Դեսպան Սավինսկին խոստումներ է տուել Թիֆլիսի մշուշապատ թերթի խմբագրին և այժմ, o horribile dictus, իր խոստումը չէ կատարել։

Знай нашихъ; մենք ևս դիպլոմատներ ունենք։

Ողորմելի՛ սնափառութիւն, յատուկ՝ որոշ հորիզոնի և կոյուղիների մէջ մեծացած Լ. Աւետիսեաններին։

Մուրճ

ՄԱՄՈՒԼ

Մենք նորից ստիպված ենք խօսել «Зак. Рѣчь»-ի և նրա Грузинъ-ի մասին։

Որքան էլ ցանկալի չէ, ներկայ ժամանակներում, բանակռիւ մղել ազգային խնդիրների շուրջը, բայց երբ մարդիկ օրը ցերեկով վեր են կենում և հայերին վերագրում այնպիսի արարմունքներ ու գործեր, որ իրականութեանը չէ համապատասխանում, ստիպված ենք հերքել այդ մեղադրանքները և նրանց ազգացաւով բռնված հեղինակներին ցոյց տալ ճշմարտութիւնը։

Հայ-վրացական յարաբերութիւնների հարցը շարունակում է թմբկահարվել վրաց մամուլի էջերում։ Այդ հարցը՝ առաջինը յարուցող «Зак. Рѣчь»-ից անցել է և միւս ազգամոլ թերթերին, որոնք այժմ իրանք իրար հարց են տալիս, բարկանում, քննադատում, ճչում, աղմկում... թէ ինչի համար, մարդ չի հասկանում. թէ ինչ են ուզում նրանք, նոյնպէս անհասկանալի է և անորոշ։

Վրաց փոքր ի շատէ առաջադիմական թերթերը, ի հարկէ, չեն բաժանում իրանց մոլեռանդ ընկերների սխալ հայեացքները, բայց նրանք էլ մի հարց չեն տալիս նրանց, թէ. «Ինչ էք ուզում դուք ձեր աղմուկով. ձեր բուն նպատակն ինչ է»։ Նրանք դէթ չեն հարցնում աղմկարար «Зак. Рѣчь»-ին, թէ «ինչ պատճառներից դրդված և ինչ նպատակներով վերջին տարին դու այդպէս եռանդով ես պաշտպանութեան տակ ևս առել Կովկասի մուսուլմաններին», որոնց դէմ հայերը ոչինչ չունեն և չը պէտք է էլ ունենան, որպէս երկար տարիների հարևաններ, և որոնց վերաբերմամբ կառավարութիւնն էլ շատ բարեհաճ է։ Հէնց նորերս, Մեծ Իշխան Փոխարքան կարգադրութիւն տուաւ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին՝ պատրաստել մի զեկուցում տեղական մուսուլմանների կրթական գործի բարենորոգման մասին և այլն։

Եւ այս բոլորից յետոյ՝ անհասկանալի է մնում իսկապէս, թէ «Зак. Рѣчь»-ը ում դէմ է պաշտպանում տեղական մուսուլմաններին։

Ինչպէս երևում է, նա մուսուլմաններին պաշտպանում է հայ ազգի դէմ։ Հայ ազգի, որ այժմ գտնվում է այն հիւանդի վիճակում, որ հազիւ կարողանում է քայլել, ուր մնաց թէ յարձակվի կամ միտք ունենայ յարձակվելու ումևիցէ դէմ։

Բայց «Зак. Рѣчь»-ը, որի նպատակները, բացի իր ղեկավարներից, ոչ ոք չի կարող հասկանալ, ահա ինչ է ասում.

Մտածում են արդեօք նրանք (խօսքը «Սախալխօ Փուրցէլի» և «Մեգօբարի» թերթերի մասին է), որ վրացիների հայերի հետ հանդէս գալը կը թեթևացնի մուսուլմանների մերձեցումը և վրացիների հետ և հայերի հետ, և նրանք չե՞ն խորհում երբեմն այն հարցի վրա, որ հայերի հետ համերաշխ հանդէս գալը կարող է հրել մուսուլմաններին վրացիներից, ոչնչով չօգնելով նրանց մերձեցմանը հայերի մեր երկրի բնակիչների հետ։ Իսկ մինչդեռ այդ այնպէս և միանգամայն հասկանալի է, մոռացված և «անկուլտուրական» տարր կոչվող կովկասեան մուսուլմանները վրացիներից սպասում են բարոյական աջակցութիւն նրա համար, որպէսզի ստիպենք հայերին դէպի նրանց վերաբերվել յարգանքով։ Եւ այս բանին հասնել կարելի է միայն այն ժամանակ, եթէ վրացիները բացարձակ բլոկ կազմեն մուսուլմանների հետ և բացարձակ էլ յայտնեն հայերին, որ իրանք համաձայն են նրանց հետ (հայերի) համաձայնութեան գալ*) միայն այն միակ պայմանով, եթէ հայերը դադարեն Կովկասի մուսուլմաններին պատասխանատու համարել Թիւրքիայում կատարված հայ-թիւրքական խժդժութիւնների և սկսեն նրանց վրա նայել իբրև իրաւահաւասար քաղաքացիների, որ նրանց հետ միատեսակ իրաւունքներ ունեն հասնելու կուլտուրական և ազգային նպատակների իրագործման։

Սրանք «Зак. Рѣчь»-ի Грузинъ-ի խօսքերն են։ Այս խօսքերից այն տպաւորութիւնն է ստացվում, որ հայերն ու վրացիները մեծ ընդհարման կամ մեծ պատերազմի մէջ են եղել, և հիմա Грузинъ-ը վրացիներին առաջարկում է հայերի հետ համաձայնութեան գալու համար պայման դնել։

Грузинъ-ի այս մտքերը չափազանց ծիծաղելի են։ Առաւել ծիծաղելի է մանաւանդ նրա այն կարծիքը, թէ հայերը Կովկասի մուսուլմաններին են պատասխանատու համարում Թիւրքիայում տեղի ունեցած հայկական ջարդերի։ Ե՞րբ, որտե՞ղ և հայերից ո՞վ է այդպիսի բան ասել տեղական մուսուլմանների վերաբերմամբ, չի իմացվում։ Եւ միթէ հայերը այնքան տգէտ են, որ թիւրք կառավարութեանը մի կողմ թողած, որ միշտ է հայկական ջարդեր սարքել, այսօր վեր կենային և պատասխանատու համարէին տեղական մուսուլմաններին, այդ անմեղ մարդկանց։

Բայց, ի հարկէ, Грузинъ-ը այս ամենը մեզանից լաւ գիտէ ու լաւ էլ հասկանում է. սակայն նրան ձեռնտու են այդպիսի սուտ ու սխալ մտքեր իրա և իր ընկերների մութ ու կասկածելի նպատակների համար։

Չէ, չափազանց ծանծաղ ու թափանցիկ է Грузинъ-ի նպատակների ծածկոցը։

---

*) Ընդգծումները մերն են։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 8 դեկտ.

Վերջին օրերս հայ կեանքը երկու զգալի կորուստ ունեցաւ—Կարապետ եպիսկոպոս և Սեդրաք Մանդինեան։ Երկուսն էլ հայ մտքի և խօսքի քարոզիչներ՝ մէկը եկեղեցական ասպարէզում, միւսը՝ դպրոցական։ Երկուսն էլ թողին իրանց ետևից աշակերտների, հետևողների մի ստուար խումբ։ Նրանք՝ այդ աշակերտները կը ցանկային, բնականաբար, մի որևէ յուշարձանով կենդանի պահել իրանց սրտերում նրանց յիշատակը։

Իմ կարծիքով՝ ամենալաւ և տևական յուշարձանը կը լինի հանգուցեալների աշակերտների կողմից ուշիուշով, խնամքով ժողովել տպագիր և անտիպ աշխատութիւնները և կազմել երկու գեղեցիկ ժողովածու։ Նրանց մէջ հայ հոգևորականը կը կարդայ, թէ ինչում պէտք է լինի եկեղեցականի մեծութիւնը, ի՛նչպէս պէտք է սիրէ և պաշտպանէ այն եկեղեցին, որին նուիրել է իր անձը. իսկ հայ ուսուցիչը կը կարդայ, թէ ի՛նչպէս իր մեծ ուսուցիչը կէս դար շարունակ խօսքով և գործով ցրեց թանձրացած խաւարը և հայ դպրոցն ու հայ մանկանը խլեց տիրացուների և խալիֆաների ճանկից։

Այդ և դրանից աւելի օգտակար բաներ կը կարդայ հայ հոգևորականը և հայ ուսուցիչը նրանց գրուածքներում։

Ա. Փարսադեան

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻՆ

—

Ցարգելի հայրենակից.

Այսօր փոխադրում եմ ձեզ «Մշակի» հասցէով մի չնչին գումար՝ 170 ռ., հանգանակած ընկերների և ծանօթների շրջանում, յօգուտ ձեր ճաշարանի։

Թոյլ տուէք ինձ օգտվել առիթից և հրապարակով մի երկու դիտողութիւն անել ձեր գործի շուրջը։

Ձեր ձեռնարկի ամբողջ թովչութիւնը, յարգելի հայրենակից, կայանում է հէնց նրանում, որ նա ծնունդ առաւ առանց զօմարների և աճեց, մեծացաւ ու ամրացաւ միայն չնչին գումարների միջոցով։

Ուշագրաւ և անսովոր էր երևոյթը։

Ո՞ւմ չէ յայտնի մեզանից, որ ամեն մի ձեռնարկ՝ կառուցված ոչ միայն առևտրական, այլ և բարեգործական հիմքերի վրա, սկզբից և եթ դրամ է պահանջում իր աջող սկզբնաւորութեան համար։ Տարրական է այդ ճշմարտութիւնը, այնքան տարրական, որ միայն ու միմիայն նրա անունով են արդարանում հրապարակով մեր բոլոր կուլտուր-հասարակական հաստատութիւնների պատասխանատու ներկայացուցիչները՝ իրանց գործի յետամնացութեան կամ սնանկութեան պատճառները բացատրելու ժամանակ։

Սակայն հայ երևելի կուլտուր-տրեգերները մոռանում են միշտ մի նոյնքան տարրական և աւելի կարևոր ճշմարտութիւն. այնտեղ, ուր բացակայում է կամ թոյլ է արտայայտվում նախաձեռնութեան ոգին, ուր հասարակական անհատները չեն տոգորվում անկաշառ սիրով ու նուիրական իդէալիզմով դէպի հանրաշահագրգիռ գործը, ուր չի լարվում էներգիան, չեն ծաւալվում և օգտագործվում ոյժերը՝ բոլոր հնարաւոր չափերով, այնտեղ, միևնոյն է, թէկուզ միլիոնների դրամագլուխ գոյութիւն ունենայ, իրերի դրութիւնը չի փոխվի դրանից։ Դրամական միջոցները միայն այն ժամանակն են դառնում կուլտուր-հասարակական բարիքներ, երբ գործադրելով նրանց խելացի հիմքերի վրա և նպատակայարմար եղանակներով՝ բեղմնաւորվում է դրանից մի հոյակապ գործ՝ հասարակական կոլլեկտիվի այս կամ այն կենսական պահանջներին ըստ հնարաւորութեան ամենամեծ չափերով բաւարարութիւն տալու համար։

Մեր ասիական դժբաղդութիւնը կայանում է ոչ միայն նրանում, որ մենք չունենք եւրոպացիների դրամական հարստութիւնը, այլ և ոչ նուազ չափերով այն հանգամանքի մէջ, որ մենք զուրկ ենք եւրոպական նախաձեռնութեան ոգուց և կազմակերպչական տաղանդից, որ մենք ռոմանտիկական վերացումներից եւ իլլիւզիաներից հիպնոսված՝ վատնում ենք հասարակական էներգիա, միջոցներ, առանց շօշափելի փոխ-հատուցումների պահանջը գիտակցելու, հետևապէս չենք ըմբռնում և ըստ հարկին գնահատում ու կիրառում ժամանակի եւ ոյժերի խելացի էկօնոմիայի սկզբունքը։

Մեր մէջ գտնվեց մէկը, որի խիզախ ձեռնարկը՝ իր սկզբնական ընթացքով, և սակայն փայլուն հետևանքներով, ամեն բան է՝ բացի, յամենայն դէպս, հայ-ասիական լինելուց։ Դուք, մեն մենակ Նազարեանդ, ծաւալեցիք ձեր գործում երկու կարգի հազուագիւտ յատկութիւններ. 60-ական թուականների կուսական իդէալիստի ֆանատիկ անձնուիրութիւն և նորագոյն եւրոպացու խիզախատիպ, ժիր եռանդ և յամառ տոկունութիւն։ Տոգորվելով այդ յատկութիւններով, առանց աջակից ոյժերի, առանց դիմումների և միջնորդութիւնների, կեանքի կոչեցիք մի գործ, որ վեր էր անհատական ոյժերից և որի նմանը անգամ հաւաքական մարմինները ձեռնարկելու համարձակութիւն չունեցան։ Այսօր ձեր ճաշարանը հասարակական պատկառելի հաստատութեան համբաւ է վայելում, և հայկական մեծ աղէտի ապագայ պատմագիրը՝ քաղցր պարտականութիւն պիտի զգայ ձեր գործունէութեանը յատկացնելու ամենալուսաւոր էջերից մէկը։

Սակայն չեմ կարող փակել այս նամակը, մինչև չը մատնանշեմ մի կարևոր հանգամանքի վրա։

Ասացէք խնդրեմ, ինչու հայ հասարակութիւնից որոշ խմբեր՝ հաստատութիւններ ու կազմակերպութիւններ՝ սկզբից և եթ անբարեացակամ—եթէ աւելի խիստ չարտայայտվենք—վերաբերմունք ունեցան դէպի ձեր ձեռնարկը։ Դուք հանդիսաւոր ակտերին ներկայ լինելու համար հրաւէրներ էք կարդում հրապարակով, և միւս օրը արձանագրում, որ բացի Նպաստամատոյցի ներկայացուցչից՝ չը կային միւս ընկերութիւններից ներկայացուցիչներ։

Ինչով բացատրել հայկական տմարդի չկամութեան այդ նոր փաստը։ Կարելի է չը խրախուսել և անգամ անբարեացակամ վերաբերվել դէպի մի ձեռնարկութիւն, որի նպատակը զուտ մարդասիրական-բարեգործական է. քաղցածին սնունդ տալ, մերկին՝ հագուստ, որբ, անտէր երեխաներին՝ խնամք ու հոգատարութիւն։

Դէպի Թիւրքահայ հարցը, որպէս քաղաքական պրոբլեմ, և դէպի նրա լուծման եղանակները կարելի է ունենալ սկզբունքային տարբեր հայեցակէտեր և տակտիկական խուսափողական դիրքեր միևնոյն ազգային իրականութեան մէջ։ Դա և՛ բնական է, և՛ անհրաժեշտ։ Բայց, ասացէք խնդրեմ, կարելի է երևակայել որևէ տարաձայնութիւն Թիւրքահայ փախստականների օգնութեան հարցում. կարելի է չը համակրել մի ձեռնարկ, որ ամբողջ ոյժերով լարված սնում, խնամում, սփոփում է դժբաղդ զոհերի, կեանքեր է փրկում դաժան ժամանակի անգութ հարուածներից, կեանքեր պահպանում՝ լաւատես ապագայի յոյսերով։

Ինձ համար անըմբռնելի կը լինէր հայկական չկամութեան այդ տգեղ փաստը, եթէ չը ճանաչէի հայկական կեանքի տխուր բովանդակութիւնը։

Հայ կուլտուր-տրեգերների խմբաւորման և գործունէութեան մրցադաշտում ամենից թոյլ գնահատվում են քաղաքական հայեացքները և ամենից քիչ յարգվում հասարակական համոզմունքները։ Նշանակում է՝ այդ կշռաչափով չէ, որ քննվում է մեր կեանքում ամեն մի նոր երևոյթի կուլտուրական արժէքը։ Գնահատութեան կրիտերիումը այն է միայն, թէ ինչ խմբի, ինչ խնամական գրուպպայի մարդ է նոր գործի հիմնադիրը։ Հարցը չի վերաբերում գործի օբյեկտիվ արժէքին և ոչ էլ հիմնադրի հասարակական հայեցողութեանը, այլ զուտ նրա թայֆայական պատկանելիութեանը։

Տիգ. Նազարեանը հիմնել է ճաշարան Թիւրքահայ փախստականների համար։

Այստեղ էականը ոչ ինքը ճաշարանն է և ոչ Տ. Նազարեանի հասարակական մտածելակերպը, այլ այն, թէ ինչ խմբի շրջանում է գտնվում գործի ձեռնարկուն։

Տ. Նազարեանը «Մշակի» մարդկանցից է, իսկ Հ. Առաքելեանը Գրական-Գեղարւեստական Սալոնի մարդկանցից։ «Մշակը» խրախուսում է Նազարեանի ճաշարանը։

Լմնցաւ արդէն. յայտնի է Տ. Նազարեանի «խնամէական» կապերի աղբիւրը։ Եւ միայն ու միմիայն այդ հանգամանքը բաւական է, որպէսզի նախանձի, հակակրանքի, չկամութեան զսպված թշնամանքի պատրաստի կարծիքը դէպի նոր ձեռնարկը՝ բերանից բերան պտտէ հակառակորդ օրգանի և թայֆայի շրջաններում։

Եւ ով է մէջտեղ տուժում. ի հարկէ ոչ ինքը՝ Տ. Նազարեանը, այլ օգնութեան ընդհանուր գործը, որի շահը թանգ պիտի լինի բոլորիս համար։

Ահա հայ հոգևոր-բարոյական կեանքի կուլտուրական մակարդակը, հայ կուլտուր-տրեգերների հոգեբանական մղումներն իրանց ասպարէզում։ Ձեր ճաշարանի դէպքը միայն մի տիպիքական, չափազանց բնորոշ օրինակ է՝ նման բազմաթիւ երևոյթներից։ Ամեն մի շինարար գործում հանդէս է գալիս նոյն թայֆայական հաշիւների յետին միտքը, նոյն գծուծ ասիականութիւնը, քէնն ու նախանձը, չկամութիւնն ու ինտրիգանութիւնը։

Ես ոչ միայն չեմ բաժանել հայ քաղքենական նացիոնալիստի սին պարծենկոտութիւնը՝ հայկական տարրի ազգային բնոյթագրի նկատմամբ, այլև տխուր խոստովանումներով միշտ յուսահատ կարծիք եմ ունեցել։

Բայց դուք, ազնիւ հայրենակից, շարունակեցէք ձեր գործը նոյն տոկուն եռանդով. ձեր ձեռնարկը վարձատրել է արդէն ինքն իրան։

Խորին պատկառանքս ձեր բարոյական մեծագործութեան առաջ։

Բ. Իշխանեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 7 դեկտեմբերի

Շամախու թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի մահը մեծ ցաւ պատճառեց Թաւրիզեցիներին։ Հանգուցեալը վարել է Ատրպատականի պատասխանատու և դժուարին թեմը մի քանի տարիներ։ Ճիշդ է, նրա օրով կուսակցական պայքարը այլևս նախկինը չէր, սակայն Ատրպատականը ապրում էր քաղաքական ալեկոծ օրեր։ Քաղաքական այդ աննպաստ պայմաններում նա տարաւ իր պաշտօնը բաւական աջող. որոշ վարչական թերութիւններ ունէր նա ի հարկէ։ Անհամեմատ մեծ և արդիւնաւոր է եղել Կարապետ եպիսկոպոսի կրթական կուլտուրական գործունէութիւնը մեզանում։ Նրա օրոք կեանք ստացաւ Կենտրոնական դպրոցը, որից շատ սպասելիքներ ունի Ատրպատականի թեմը։

Նախօրօք ցրված յայտարարութեան համաձայն, անցեալ կիրակի Ղալայի ս. Աստուածածնի եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ Կարապետ եպիսկոպոսի համար. հաւաքվել էր մեծ բազմութիւն։ Առաջնորդական փոխանորդ Կարապետ աւագ քահ. Մանուկեանը տուեց հանգուցեալի կենսագրականը, իսկ Վ. Վասիլեանը կանգ առաւ նրա կրթական-կուլտուրական և առ հասարակ հասարակական գործունէութեան վրա։ Թաւրիզում դեռ երկար անմոռաց կը մնայ նրա յիշատակը։

⁂

Հայուհեաց Բարեգ. Ընկերութիւնը ձեռնարկել է գործունէութեան։ Մի քանի օր առաջ բացվեց տեղիս մանկապարտէզը։ Բացի այդ՝ Ընկերութիւնը մտադիր է մօտիկ ապագայում մի որբանոց բաց անել Թաւրիզում, բերել տալ Սալմաստից քանի չափ հայ որբեր և այստեղ իր հաշւով խնամել։ Այդ առիթով Ընկերութեան վարչութիւնը մի քանի օր առաջ կայացրեց ժողով, որտեղ դրսից էլ հրաւիրված էին մասնակցելու։ Ժողովում որոշվել է որբանոցի ծախսերի համար յատկացնել այն 300 թումանը, որ Ընկերութիւնը իւրաքանչիւր տարի ծախսում էր Միանդաբում բացած դպրոցի վրա, որը, այնտեղ տիրող խառն դրութեան պատճառով, այս տարի չի բացվելու, իսկ մնացածը հոգալ տեղական բարեգործների նուիրատւութիւններով, երեկոյթներից և ներկայացումներից առաջացած արդիւնքով։ Լաւ նպատակ է և միանգամայն գովելի։ Կան կարծողներ սակայն, որ աւելի նպատակայարմար կը լինէր որբերը ուղարկել Թիֆլիս և այնտեղի որբանոցում պահել Հայուհեաց Բարեգ. Ընկ. հաշւին, որովհետև Թաւրիզը այդ տեսակէտից շատ անյարմարութիւններ ունի. բացի այդ՝ կը լինէր ծախսերի որոշ կրճատում։ Վերջին կարծիքը մենք էլ խելացի ենք գտնում։

Robert

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բորժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ՎԵՐՋ ՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻՆ
ՏՐԻՊԵՐԻ (սուսունակ) ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Սուսունակը մի քանիսի կարծիքով անբուժելի հիւանդութիւն է, իսկ մի մասի էլ՝ թէև բուժելի, բայց պահանջում է երկար ու ձիգ ժամանակ և նիւթական մեծ ծախք, բացի բարոյական տանջանքներից։ Այժմ այդ հիւանդութիւնը բժշկվում է երեք շաբաթվայ միջոցում «Ռապիդ» միջոցով, որ ես եմ հնարել և թոյլ է տրված բժշկական խորհրդով № 1295 վկայաթղթով։

Այս միջոցը հինգ տարվայ ընթացքում բուժել է մի քանի հազար հիւանդների և մեծ անուն հանել թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում։ Բայց մինչև այժմ էլ կան հիւանդներ, որոնք կասկածով են վերաբերվում իմ յայտարարութեանց։

Այս կասկածանքը բնական է, որովհետև վերջին մի քանի տարիներում այնքան «հրաշագործ» դեղեր են ի վաճառ հանվել, որոնք շուտափոյթ բուժումն են խոստանում, որ հիւանդը կարդալով յայտարարութիւնները ոչ միայն դժուարանում է դրանցից ընտրել, այլ և սկսում է կասկածել նրանց տուած խոստումների վերաբերմամբ։

Գուցէ շատ հիւանդներ փորձել են մի քանի դեղեր և՝ գուցէ՝ հիասթափվել նրանց ներգործութեան ու խոստումների վերաբերմամբ, բայց դա չէ նշանակում, որ բոլոր դեղերն էլ այդպէս են։ Իմ առաջարկած միջոցը երեք շաբաթվայ ընթացքում բուժում է այս հիւանդութեանը ամենահնացած տեսակը։

Հինգ տարվայ ընթացքում ես ստացել եմ մեծաքանակ շնորհակալական նամակներ, որոնք ինձ թոյլ են տալիս յայտնելու, որ «Ռապիդը» գործ ածելու ժամանակ չը բուժելու դէպք չէ եղած և իւրաքանչիւր հիւանդ, որ գործ է ածել երկու կրկնակի սրուակ «Ռապիդ», անպայման առողջացել է, որքան որ հիւանդութիւնը տևած լինէր։

Հիւանդների ուշադրութիւնն եմ հրաւիրում այն հանգամանքի վրա, որ իմ հաւաստիացումը «Ռապիդ» միջոցի մասին և իմ խոստումները ի զուր չեն, ի հաստատութիւն որի Թիֆլիսի բաժանմունքից ամեն մի 2 սրուակ ապսպրողի (բուժման ամբողջ կուրսը) ես ձրի ուղարկում եմ դեղի հետ միասին ՊԱՐՏԱՒՈՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ, ՓՈՂԸ ԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, եթէ գրվողը չը բժշկվի։ Այս թղթի պատճէնը այս է.

«Ես, ի ներքոյ ստորագրողս, տալիս եմ այս թուղթը պարոն այս ինչին այն բանի համար, որ ծախելով նրան «Ռապիդ» պրեպարատի 2 կրկնակի սրուակ հօնօրրէյի դէմ, երաշխաւորում եմ, որ 20-օրեայ գործածութիւնից յետոյ՝ նրա հիւանդութիւնը բոլորովին կանհետանայ։ Եթէ այդ ժամանակամիջոցում, նրա հիւանդութիւնը, լաբորատորիայում նրա մէզը քննութեան ենթարկելուց յետոյ, բուժված չը լինի, այն ժամանակ 9 ր. պարտաւոր եմ վերադարձնել»։

Աւելի լաւ համոզելու համար ես վճռեցի ամեն մի յայտարարութեան մէջ տեղաւորել նորանոր շնորհակալական նամակներ։ Այս նամակների իսկականները պահվում են ինձ մոտ և ցանկացողները կարող են միշտ էլ տեսնել։ Այս նամակների իսկութեան համար ես պատասխանատու եմ և դրանց կեղծութիւնը ապացուցանելու դէպքում ես պատրաստ եմ վճարել 1000 ր., որևէ բարեգործական նպատակով։

Սրտանց շնորհակալ եմ ձեզանից, պ. Դելամուրէ, ձեր հիանալի դեղի՝ «Ռապիդ» պրեպարատի համար։ Ամբողջ 10 տարի տանջվում էի հօնօրրէա հիւանդութիւնից, փորձել եմ բոլոր դեղերը, սակայն առանց հետևանքի։ Այդ ժամանակի ընթացքում թէ որքան ցաւեր եմ քաշել՝ երևակայել չէք կարող։ Այժմ մէզս անալիզի ենթարկել տալով՝ գօնօկօկներ չերևացին։ Ձեր «Ռապիդ» պրէպարատը կաշխատեմ տարածել ծանօթ շրջաններում՝ միանգամայն հաւատացած լինելով, որ նա կը բուժէ իւրաքանչիւր հիւանդի. Զ. Մ. Կ.։ Օդէսսա։

Երկու կրկնակի սրուակի և մի արկղիկ պիլիւլների (լրիւ բժշկվելու կուրսը) գինն է 9 ռուբլի։ Վերադիր վճարով և ճանապարհածախսով 10 ռուբլի։ Վերադիր վճարով ուղարկվում է 3 ր. կանխավճար ստանալուց յետոյ։

Պատուէրները հասցէագրել միմիայն.
Въ Кавказское отдѣленіе Московской лабораторіи М. Деламурэ, Тифлисъ, Эриванск. пл., Пушкинская, 3, отд. 2/М, верхній этажъ, противъ Городской Управы, д. Кредитнаго О-ва.
Հեռագրական հասցէն՝
Тифлисъ—Американецъ.
(կ.) 609. 50—15

0—75 174. (ե. կ.)

ПРИ ГОНОРРЕѢ
въ острой и хронической формѣ. а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ
„АРМАТИНЪ“ А. Я. АКУЛІАНЦА
для внутренняго употребленія. „Арматинъ“ совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина“ не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.
ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ“ А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ“ только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ. аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բորժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—218

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО“
М. ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3.
ВЕРХНІЙ ЭТАЖЪ.
50—14 761. (չ. կ.)

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ՄԱԿ. ԶՄՇԿԵԱՆԻ
1916 Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Չը նայելով ամեն բանի թանգութեան, գները չեն աւելացված։
«Ծոցինը» 20 կ., «Սեղանինը» 30 կ.
Պատուէրները առանց կանխավճարի մնում են անկատար, և որպէս զի ժամանակին ստանան, պէտք է շտապեն վաղօրօք յայտնել։
Հասցէն՝ Թիֆլիս, ՄԱԿԱՐ ԶՄՇԿԵԱՆ
(ե. կ.) 883. 10—5

Harutiun Shekerjian

ՕԳՏՎԵՑԷՔ ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹ
ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԷՐՋԵԱՆԻ
ՀԻՊՆՕՏԻԶՄԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻ
ՄՏՔԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
Գործնական հոգեբանութեան
ԿՈՒՐՍԵՐԸ
Այս նոր կուրսերը մասնաւորապէս պատրաստված են նպատակով, որ ընթերցողը կարողանայ սովորել Հիպ տիզմը առանց ուսուցչի, առանց մեծ ծախքերի և առ միջնորդի սոսկ մտքի ոյժով։
Ընթերցողը Հիպնոտիզմին տիրապետելուց յետոյ՝ կարող է բուժել զանազան սակ հիւանդութիւններ, որոնք նշանակված են 32-րդ դասում։
Հիպնոտիզմով կարելի է վերացնել վատ սովորութիւններ երեխաների մէջ. գող թիւն, ծուլութիւն, ծխել, մի խօսքով արմատախիլ անել՝ ինչ որ վատ է, ու ներշնչել որ լաւ է և օգտակար։
Հիպնոտիզմով դուք կարող էք ուղարկել ձեր ենթակային հեռու վայրեր, գտնվում են ձեր սիրելիները և բարեկամները, որ նրանցից տեղեկութիւն բերի ձեզ
Հիպնոտիզմով դուք կարող էք, բացի գաղտնիքների մէջ թափանցելուց՝ տալ և շեցուցիչ և ծիծաղ առաջ բերող սէանսներ (տեսարաններ)։ Հիպնոտիզմով դուք կարող իմանալ ով է վերցրել ձեր իրերը, կամ ուր էք կորցրել կամ թագցրած իրերի տեղը
Արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետևեալ հա ցէով. СУСАННА ШЕКЕРЖЯНЪ, Вельяминовская ул. № 22, Тифлисъ.
(կ.) 766. 20—8

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ն. Ո. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թւից)
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
Դասընթացը 4-ամսեայ՝ ամենօրեայ պարապմունքներով։
Խնդիրքների ընդունելութիւնը դեկտեմբերի 15-ից։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից 1916 թ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատանը՝ Թիֆլիս, Նիկոլայեվսկայա փողոց, № 22, տէլէֆօն № 7—44.
(ե.հ.շ.կ.) 909. 0—2

„Մշակի“ խմբագրատանը
վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.
1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բաբայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Բ-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . . 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Աւ. Առաքելեանի . . . 50 կ.
6) Մազդա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի . . . . 40 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։
Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ“, Тифлисъ.

ԲԺՇԿ. ՖԵԼԴՇԵՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ՝ սրսկումներ, մասսաժ ձեռ էլեկտրականութեամբ հիմնաւոր բժշկութիւն սու խրօնիքական տրիպէրի, փափուկ ու կոշտ շա սեռական թուլութեան եւ անկարողութ բժշկութիւն նորագոյն դեղերով. բժշկական-ջղային խորհուրդներ։ Եկող օտար քաղ հիւանդներին առաջնորդում եմ մասնագէտ բժիշկների մօտ և ըստ ցանկութեան՝ ինձ մօտ մակերպում եմ կօնսիլիում (բժշկ. խորհրդակցութ Օտարերկրացիներին ուղարկում եմ խորհուրդ ռեցեպտներ 3 ռուբլի վճարով։ Գաղթականներին չքաւորներին խորհուրդը ձրի՝ ինձ մօտ։ Ընդու թիւնը ամեն օր 3—4 ժամը։ Հասցէս՝ Տիֆ Семеновская ул. № 9. Медицинскому фельд А. Г. ЕСАЯНЦУ.
Ինձ մօտ ծախվում են իմ կազմած 1) «Վ կան ախտերի բժշկարան» բազմաթիւ խորհ ներով ու ռեցեպտներով, գ. 1 ռուբ. 2) «Փոք ների բժշկարան», անհրաժեշտ ամեն մի ը քի, գ. 50 կ., 3) «Ծիծաղի ակմը»՝ ան գ. 20 կ., 4) «Ներկարարութ ստվարը», ծ շարժ փոցովլի, գ. 20 կ., 5) «Բաժակ», գ. 10 ճանապարհի ծախս 20 կոպէկ։
(հ. կ.) 311. 100—

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.